

Исторический

Список вещей 2
~~Исторический~~ Сил
государственный географический

657.3
4-50

1933

24 SEP 2010

Ն. Ա. ԿԻՊԱՐԻՍՈՎ

EROS YAM J.S

ԲԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱԿԱ
ԼՆՈՐԱԿԱՆ — ՏՆՏԵՍԱԳԻՏԱ-
ՅԵՎ ՀԱՇՎԱՑԻՆ ԳԻՏԵ-
ՔՆՈՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Կ. Զ. Ի. Ֆ. Ե. Ն.

Խ. Հ. Ի. ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ

ԲԱԼԱՆՍԱՑԻՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Խմբագրություն
Վ. Ի. ԴՐՈՃԺԵՆԻՆՈՎԻ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

ՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ

657.3
4-50

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՏԵՐԵՎԱՆ 1933

0 MAY 2013

28 06 9

657.3
4-50

Ն. Ա. ԿԻՊՇԱՐԻՍՈՎ

ԲԱՆԱՆՍԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

1006
28087
9001

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴԱՍԸՆԹԱՅՆ
ԱՆՅՆԵԼԻՍ

Ներկա տարրական դասընթացը կազմված է հաշվառման տեսու-
թյանն անձանոթ անձանց համար:

Ամբողջ դասընթացը բաժանվում է 9 առանձին թեմաների:

Առաջին թեման ընդհանուր պատկերացում է տալիս առարկայի
և նրա խնդիրների, ինչպես և հաշվառման բովանդակության, դերի և
նշանակության մասին խորհրդային Միության մեջ՝ ի տարբերություն
կապիտալիստական տնտեսությունների հաշվառման:

Հետևյալ չորս թեմաները նվիրված են բալանսային հաշվառման
մեթոդոլոգիայի շարադրանքին — նրա բոլոր ետապներում:

Վեցերորդ թեմայում խոսվում է բարդ և խոշոր տնտեսություն-
ներում հաշվառում կազմակերպելու մասին:

Ի վերջո — վերջին չորեք թեմաները նվիրված են դոկումենտա-
ցիայի և հաշվառման տեխնիկայի հարցերի շարադրանքին: Քանի վոր
դասընթացը կազմված է հաշվառման թեորիայի հետ նոր ծանոթացող
անձանց համար, ուստի նրա մեջ տրվում են թեորիական հիմնական
հասկացություններ, բայց վորում ուշադրության մեծ մասը հատկա-
ցվում է ձեռք բերած գիտելիքները գործնականորեն ոգտագործելու ու-
նակությունների զարգացմանը: Այս գործնականությունը, վոր միան-
գամայն հասկանալի է հաշվառման ուսումնասիրության ժամանակ,
չի բացառում, այլ ընդհակառակը, չինթադրում է համապատասխան
տեսական հիմնավորում, քանի վոր գործնականը չի կարող լինել ա-
ռանց տեսականի, ինչպես և վերջինս առանց գործնականի: Ներկայումս
հաշվառումը չի կարող լինել կատարվող տնտեսական պրոցեսների սոսկ
մեխանիկական գրանցում, իսկ հաշվային աշխատավորը միայն մի անձ,
վոր կատարում է այդ գրանցումները շարուն և տրաֆարետ ձևերով:
Թեկուզ և ամենաստորին ողակի հաշվային աշխատողը պետք է հաս-
կանա հաշվառման ամբողջ պրոցեսը, հասկանա նրա ինչպես տնտեսա-
կան, նույնպես և քաղաքական նշանակությունը, վորը նրա շրջահա-
յաց լինելու հետագա զարգացմանը, դիտելիքների խորացմանը և
ընդարձակմանը կտա կողմնորոշում: Դա այնքան ավելի անհրաժեշտ է
վորքան դասակարգային սրված պայքարում հաշվառման հարցերը հան-
գիստանում են զնասարաբուրության և մեզ թշնամի բուրժուական տեսու-
թյունները ներս խցկելու ասպարեզ:

Պատմ. խմբագիր՝ Ա. Տեր-Հովհաննիսյան, տեխն. խմբագիր՝ Դ. Զենյան, լեզվ.
խմբագիր՝ Ա. Ելյազյան, սրբագրիչ՝ Հ. Սառչկյան: Պատկերաթի տպարան, գլխով-
լիա 9252, պատվեր 1782, հրատ. 2685, տիրած 1000: Հանձնված է արտագրու-
թյան 29 հուլիսի 1933 թ. ստորագրված է տպելու 19 սեպտ. 1933

նկատի առնել: Միանգամայն այլ իմաստով ասում են՝ պետք է տանել հաճախման հաշվառումը, վոր նշանակում է հաշվել հաճախման քանակը, հետևել նրան հաշվելու միջոցով: «Հաշվառում» բառի վերջին գործածությունը ցույց է տալիս, վոր այս դեպքում հասկացվում է «հաշվում» կամ «թվարկում»:

Յերբ մենք «հաշվառման» մասին ենք խոսում, ամենից առաջ ի նկատի ունենք խորհրդային տնտեսության տնտեսական պրոցեսներին հաշվառումը: Դրա համար մեր ուսումնասիրելիք հաշվառումը ամենից առաջ «տնտեսական հաշվառում է», տնտեսական պրոցեսների շարժման հաշվառում:

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչու մենք չենք գործ ածում «հաշիվ», հաշվել» բառերն, այլ ասում ենք «հաշվառում», «հաշվի առնել»:

«Հաշիվը», «հաշվելը» դուռ թվարանական հասկացողություններ են և հաշիվն ինքնին ծառայում է վորպես հաշվառման գործիք: Իսկ «հաշվառումը» գիտական հատուկ մեթոդ է, վորն միջոցով հաշվում են տնտեսական առանձին պրոցեսները և տրվում հաշված տնտեսական պրոցեսների թվական միացյալ արտահայտությունը տնտեսավարության նախագծած նպատակների խնդիրների համեմատ:

Հաշվառումը կարգավորում է տնտեսական պրոցեսները, կապակցում է նրանց, նպաստում է պարզելու այդ պրոցեսների պատճառներն ու հետևանքները և ապահովում տնտեսությունը վարելու նկատմամբ անհրաժեշտ հսկողությունը:

Սոցիալիստական շինարարության զարգացման ներկա ետապում ստուգման ամենախիստական միջոցը հանդիսանում է ռուբլու վերահսկողությունը, իսկ տնտեսավարելու հիմնական լծակը — տնտեսավարկի պահպանումը: Ընկեր Մոլոտովը սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների համամիութենական առաջին համագումարում արտասանած իր ճառում նշեց, վոր ճառանց տնտեսավարկի սկզբունքի իրականացման, դործարանից մինչև տնտիսավորը ներառյալ, առանց գործնականում յուրաքանչյուր տնտեսական հոգվածով ռուբլիներն ու կոպեկները հաշվելու, չի կարելի պահանջվող կարգ ստեղծել արդյունաբերության մեջ և ամբողջ տնտեսական աշխատանքում:

Ռուբլով ստուգումը, տնտեսավարկի պահպանումը պետք է ապահովեն դրամական չափանիշի հաշվառմամբ, չափանիշ, վորը բալանսային հաշվառման մեջ գործադրվում է վորպես միասնական՝ բոլոր պրոցեսները թվարկելու և մեկ տնտեսական պրոցեսը մյուսի հետ համեմատելու համար:

«Դրամական» հաշվառումն ի հարկե, անպայման տնտեսական հաշվառման սեփականությունը չէ: Բալանսային հաշվառումը հնարավոր է նաև այլ չափանիշի հիման վրա, բայց ներկա ժամանակաշրջանում տնտեսավարկը վորպես տնտեսությունը վարելու հիմնական մեթոդ,

կարող է ստուգվել գլխավորապես ռուբլով, և այդ պատճառով դրամական հաշվառմանը կարևոր տեղ է հատկացվում:

Սրա հետ մեկտեղ ներկայումս արդեն հաշվառումն սկսվում է տարվել և այլ չափանիշներով: Վորպես հաշվառման նման որինակ, կարելի չէ ցույց տալ կոլտնտեսությունների հաշվառումն «աշխոր»-ով: Բայց «աշխորը» կոլտնտեսություններում չի հակադրվում դրամին և նպատակ չունի վիճարկելու դրամը: Այժմ մենք գտնվում ենք այնպիսի կտապում, չերը կոլտնտեսությունների «աշխորը» պետք է տնտեսական խորհրդային դրամի հետ կողք-կողքի ապրել ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ (հուլյն թվում և կոլտնտեսություններում) («Большевик» № 8, 1931 թ. էջ 68):

Ցեղ այդպես, հաշվառում ասելով մենք հասկանում ենք դրամական կամ, ինչպես արտահայտվում են, տնտեսական պրոցեսների «արժեքային» հաշվում: Բայց այդ արժեքային հաշվառմանն ոգնելու համար, շատ դեպքերում պետք է տարվի նաև քանակական հաշվառում: Որինակ՝ նյութական առարկաների նկատմամբ հաշվառումը կարելի չէ արտահայտել կշռաչափով, չերկարության չափով, ծավալի չափով և այլն: Այս տնտեսական հաշվառման պրոցեսում պետք է լինի վորակային հաշվառում: Վորպես վորակային հաշվառման որինակ, կարելի չէ ցույց տալ աշխատանքի արտադրողականության, սոցմրցման և հարվածաչնություն արդյունքների հաշվառումը և այլն: Դրամական, վորակական և քանակական հաշվառման միջև որդանության կապ ստեղծելը խորհրդային տնտեսության հաշվառման վերակառուցման ահտուալ պրոբլեմն է հանդիսանում: Այդպիսի որդանական միացումը պետք է ապահովի այն դրույթը, վոր հաշվառումը հանդիսանա «ժողովրդական տնտեսության պլանը կազմելու և նրա կատարումն ստուգելու կարևորագույն դեմքը» (Ն. Ս. Հ. Մ. Ժ. Կ. Ի. 95. — 1931 թ. վորոշումից):

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ներկայումս մենք ունենք մի քանի տարբեր տեսակի տնտեսական հաշվառում կամ ավելի լավ է նրանց անվանել հաշվառման մեթոդներ: Գոյություն ունեն՝ բալանսային, վիճակագրական և օպերատիվ հաշվառումներ:

Կանգ առնենք ամենից առաջ բալանսային հաշվառման վրա: Նա այսպես է կոչվում այն պատճառով, վոր կիրառվում է բալանսի (բալանս-հաշվառություն) սահմաններում:

Բալանսային հաշվառումն այլ կերպ ընդունված է անվանել «հաշվապահական հաշվառում» հաշվապահություն բառից, վորը գերմաներեն թարգմանությունը կնշանակի դրբեր վարել (вести): Բայց այդ անունը ճիշտ չէ և վորևե չափով չի բնութագրում ներկա՝ վոչ միայն

խորհրդային, այլ և կապիտալիստական հաշվառումը: Նման կոչումը արմատացել է նրա համար, վոր հաշվառումն առաջ իրագործվում եր գրքերում: Բայց այդ «գրքային» հաշվապահական հաշվառումը վաղուց արդեն վեր է ածվել առանց գրքի հաշվառման և այդ գրքային-հաշվապահական հաշվառումը բնութագրող տերմինը, վորպես հաշվառման տեխնիկական անգամ չբնութագրող տերմին, արդեն չի կարող դորժածվել: Դրքային-հաշվապահական հաշվառումն ունի իր յերկու տեսակները—հասարակ հաշվառում և կրկնակի հաշվառում:

Հասարակ հաշվառումը կամ հասարակ հաշվապահությունը տա-նում է միայն մեկ տնտեսության տնտեսական արժեքների և հաշվարկների հաշվառումը մեկ ուրիշի հետ: Հասարակ հաշվապահությունը «բալանսային» հաշվառում կոչվել չի կարող, քանի վոր նա չի ոգտվում հաշվառման այն մեթոդից, վորը բնորոշ է կրկնակի հաշվառման համար: Բալանսային մեթոդը վոր միայն տնտեսական գանգվածներն է հաշվառում, այլ և մեծ մասամբ տնտեսական պրոցեսներն իրենց ամբողջությամբ:

Այստեղ հասկանալի չե, վոր հնարավոր չե ամբողջ պարզությամբ սպառել բալանսային հաշվառման ելուցյունը:

Նրա ելուցյան լրիվ ըմբռնումը կատարվի միայն բալանսային հաշվառման մեթոդությունների յուրացման հետևանքով, իսկ այդ հաշվառման մասին կիսովի հետագա թեմաներում:

Բալանսային հաշվառումից բացի կա վիճակագրական հաշվառում, վոր կիրառվում է վիճակագրության մեթոդներով: Վիճակագրական, ամենից առաջ, դրամական հաշվառում չե:

Նա կարող է կիրառել տարբեր չափանիշներ, վորովհետև քննում է տնտեսական պրոցեսների առանձին տեսակները, չընդգրկելով տնտեսության ամբողջականությունն իր համակարգ կապակցությունը, ինչպես այդ անում է բալանսային հաշվառումն այն սահմաններում, ինչ վոր յենթակա չե միայն դրամական գնահատմանը:

Վիճակ. հաշվառումն ուսումնասիրում է առանձին տնտեսական պրոցեսների շարժումն ու զարգացումը վորոշ կտրվածքով, սխտեմի չե վեր ածում և զանազան չափանիշներով տալիս այդ իսկ տնտեսական պրոցեսները վերաբերյալ ընդհանրացնող տվյալներ:

Տնտեսական կյանքի առանձին կողմերի յատկին ընդհանրացրած յեղրակացություններ անելու համար, բալանսային հաշվառման տվյալները նույնպես կարող են վորոշ վերլուծության և վիճակագրական մշակման յենթարկվել:

Բայց տնտեսական հաշվառումը չի սահմանափակվում իր այդ յերկու հիմնական մեթոդներով: Սոցիալիստական շինարարությունը, վոր հիմնված է տնտեսությունը պլանային ձևով վարելու հիման վրա, ներկայումս այնպիսի խոշոր պահանջներ է առաջադրում հաշվառմանը՝ թե նրա արագության, թե ցուցանիշների բազմազանության իմաս-

տով, վոր և բալանսային, և՛ վիճակագրական հաշվառումն արդեն ի վիճակի չեն տնտեսությունը լրիվ չափով սպասարկել Գոյություն ունի հաշվառման նաև յերրորդ տեսակը՝ ոպերատիվ հաշվառում: Ոպերատիվ հաշվառումն ունի տարբեր իմաստ: Ոպերատիվ հաշվառումը գործառնությունները նշում է առանց վորեն ձեականություն, առանց փաստաթղթերով հիմնավորելու: Յեվ իր այդ ձևով ոպերատիվ հաշվառումն ունի ժամանակավոր կողմնորոշող նշանակություն, վոր հաշվառման դեր է կատարում միայն կարճ ժամանակ և հնարավորություն է տալիս տնտեսական ընթացիկ կարգադրությունները կատարել արագությամբ: Ոպերատիվ հաշվառման հիմնական նշանակությունն այն է, վոր նա գործառնության ընթացքի արտահայտման հարցում լինի բալանսային հաշվառման լրացնողը:

Սրան վերաբերում է, որինակ՝ այն ըզլորի հաշվառումը, վորը գեո չի կատարվել տնտեսության մեջ, այլ միայն նախատեսված է կատարել, կնքած, բայց գեո չկենսագործվող պայմանագրերի, յենթադրվող մատակարարումների, բեռների ըստ առանձին շրջանների շարժման հաշվառումը և այլն:

Ինչպես բալանսային, նույնպես և հաշվառման այլ տեսակներին շատ մոտ է այսպես կոչված կալկուլյացիան, վորը նույնպես հաշվառման ֆունկցիան է կաղմում:

Սովորաբար կալկուլյացիա չեն անվանում այն հաշվումը, վոր նպատակ ունի պարզել տնտեսական գնազան պրոցեսները՝ արտագրության, մթերման և այլ բոլոր ծախսումները: Բայց կալկուլյացիա հասկացողությունը շատ ավելի լայն հասկացողություն է: Հաշվառման ժամանակ տարբեր նպատակներով հարկավոր է լինում գործ ունենալ տարբեր չափման հետ. որինակ՝ կամ վերահսկողության նպատակով, կամ առանձին տնտեսական գործառնությունների արդյունքները պարզելու նպատակով և այլն: Այդ չափումը կամ կալկուլյացիայի յենթարկելը կարող է լինել կամ միայն բնականով (որինակ՝ վորոշ արտադրանքի համար՝ նյութերի, վառելիքի, էլեքտրական եներգիայի ծախսը, վորոշ արտադրական պրոցեսի համար՝ անհրաժեշտ բանվորական ժամանակի քանակը) և կամ թե կարող է ընդունել նաև դրամական ժամանակի քանակը) և կամ թե կարող է ընդունել նաև դրամական արտահայտություն: Կալկուլյացիաները լինում են՝ նախնական. այս դեպքում նրանք սահմանում են վորոշ առաջադրանքի նորմաները, և հաշվետվական, վոր յերևան են բերում ծախսումների փաստական քանակը՝ առաջադրանքի կատարման դեպքում:

Սորհրդային պլանային սոցիալիստական տնտեսությունում պահանջվում է բոլոր յերեք տեսակի հաշվառումները՝ և՛ բալանսային, և՛ վիճակագրական, և՛ ոպերատիվ: Բայց սա դեռևս քիչ է: Հաշվառման այս բոլոր ուղղությունները չեն կարող գոյություն ունենալ անջատ և առանձնացած: Միայն նրանց ձուլումը և լիովին որդանական կապը կսպասարկեն պլանային տնտեսության ճիշտ դեկավարմանը:

Ներկայումս այս հարցը հերթի չէ դրված ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1931 թ. 9 մայիսի վորոշման կապակցությամբ, վորը պահանջում է հաշվառման բոլոր ձևերի պարտադիր միացում:

Այդ վորոշման հիման վրա Պետպլանին կից ստեղծված է Ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչություն, վորի վրա պարտականություն է դրված ղեկավարել խորհրդային տնտեսության տարբեր բնագավառներին հաշվառման կառուցվածքը:

Ներկայումս դեռ չկան վորևէ ճշգրիտ ցուցումներ հաշվառման բոլոր տեսակներին որդանական ձուլման մասին, սակայն գործնական կյանքն արդեն ուղիներ է նշում զրա համար, առաջին հերթին այնպիսի միասնական փաստաթուղթ կազմելու միջոցով, վորը տալիս է բոլոր կարևոր տեղեկություններն ու ցուցանիշները՝ բոլոր տեսակի հաշվառումների համար:

Կազմակերպչական ձուլումն արդեն կատարված է:

Բոլոր գերատեսչություններում, հիմնարկներում և ձեռնարկներում ստեղծված է հաշվառման միասնական մարմին—հաշվառման և հաշվետվության սեկտոր:

Ներկա տարրական դասընթացը նպատակ չի դնում նման միասնական հաշվառման պրոբլեմները լիովին մշակել, սա նախատեսված է գլխավորապես միայն բալանսային հաշվառման հիմունքների ուսումնասիրման համար, բայց ըստ հնարավորության՝ նրա մյուս տեսակների կապակցությամբ:

Հարցեր կեկնոդարքան համար

1. Ի՞նչ բան է «հաշիվը» և «հաշվառումը» և ի՞նչ տարբերություն կա նրանց միջև:

2. Ինչ՞եւ հաշվառումը ներկայումս իրագործվում է առավելապես վորպես դրամական հաշվառում և ի՞նչ նշանակություն ունի դա տնտեսավարի գեպրում:

3. Տնտեսական հաշվառման ի՞նչ հիմնական տեսակներ կան:

4. Ի՞նչ բան է կալվուլյացիան և ինչպե՞ս է նա կապվում հաշվառման հետ:

5. Ինչ՞եւ անհրաժեշտ է բոլոր տեսակի հաշվառումների որդանական ձուլումը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հաշվառումը գոյություն ունի շատ հին ժամանակներից և անցել է մեկ տնտեսության մեկ ուրիշի հետ ունեցած տնտեսական արժեքները և փոխհարաբերությունները պարզ հաշվելու ստադիայից մինչև բարձր տնտեսության բոլոր պրոցեսների հաշվառման շրջանը: Այդ պատճառով էլ հաշվառումը վորևէ տնտեսական կարգի պահանջ չէ,

այլ կիրառվում է ամեն մի տնտեսության մեջ, Բայց հաշվառման նշանակությունն ու դերը տարբեր են և կախված են տնտեսության սոցիալ-տնտեսական կառուցվածքից:

Դասակարգային հասարակության մեջ հաշվառումն իշխող դասակարգի դասակարգային գենքն է և միշտ կառուցվում է այնպես, վոր սպասարկի միայն այդ դասակարգի շահերին: Դրա համար էլ հասարակության դասակարգային կառուցվածքի հետ միասին կերպարանափոխվում է նաև հաշվառումը:

Վերցնենք կապիտալիստական տնտեսությունը և կապիտալիստական հաշվառումը: Կապիտալիստական տնտեսությունը հիմնված է առանձին կապիտալիստների՝ արտադրության միջոցների նկատմամբ ունեցած սեփականության վրա և ըստիցս է մի շարք առանձին անհատական ձեռնարկներից, վորոնք կապված են միմյանց հետ միայն շուկայական հարաբերություններով, վորոնք գործում են բացառապես շահ ստանալու նպատակով:

Այստեղից ծագում է յերեք հիմնական դրույթ, վորոնք կապիտալիստական հաշվառումն են բնորոշում:

1. Այդ հաշվառումը տեղի չէ ունենում առանձին, անհատական ձեռնարկի սահմաններում և սպասարկում է միայն տվյալ ձեռնարկի կամ ավելի ճիշտ՝ նրա սեփականատիրոջ (տերերի) շահերը:

2. Պարփակված լինելով առանձին ձեռնարկներում, կապիտալիստական հաշվառման բովանդակությունը կազմում է անհատական կապիտալի շարժումը:

3. Կապիտալիստական հաշվառման վերջնական նպատակն է՝ վորոշել կապիտալիստի ստացած շահը:

Անհատական կապիտալի նման շրջապտույտի հաշվառումը, վորի վերջնական նպատակն է գուրս բերել շահը, կազմում է կապիտալիստական հաշվառման հիմնական խնդիրը:

Առանձին ձեռնարկի սահմաններում պարփակված նման հաշվառումը տարվում է այնպես, վոր Թագցվի բանվորին շահագործելու առևտրական գաղտնիքը, այսինքն հանդիսանում է կապիտալիստների դասակարգային ղենքը բանվոր դասակարգին կեղեքելու համար և նպատակ ունի զգուսավորել և պաշտպանել կապիտալիզմը (Լենին):

Բայց կապիտալիզմն ապրել է իր զարգացման զանապան հոսանքները և դրա համեմատ էլ փոխվել են նրա հաշվառման ձևերը:

Մանր ապրանքարտադրողը, որինակ՝ հասարակ արհեստավորը տարել է իր հաշվային գիրքը միայն իր գլխում (Վ. Մ. «Կապիտալ» հ. 2, էջ 82), վորովհետև նրան անհրաժեշտ էր հիշել առկա յեղած արտադրության միջոցները, պատրաստի արտադրանքը և մյուս ձեռնարկների կամ անձանց հետ ունեցած իր պարզ հաշվարկները:

Առևտրական կապիտալի շրջանում հաշվառումն արդեն բարդացավ և չեր կարող սահմանափակվել «գլխի մեջ» լեղած հաշվառումով: Հաշ-

վառուցն արդեն պետք է արտացոլեր ապրանքների փոխանակման գործարքը և կապիտալի աճումը՝ վորպես առետրական շահի աճում:

Կապիտալիզմի բարձր զարգացման այն շրջանում, յերբ արաւ-դրութիւնը ֆարերկաւ գործարանային եր դարձել, հաշվառման խնդիր-ներն ավելի բարդացան:

Կապիտալիստի համար, վոր շրջապատված եր հսկայական մրցակ-ցութեամբ, արդեն խնայարկեղ եր հաշվառման մեջ ունենալ տնտեսա-կան պրոցեսների խոր արտացոլում: Կապիտալիստն իր հաշվառումից պահանջում է բոլոր տնտեսական պրոցեսների ճիշտ վերլուծութիւնը, վորպետեղի նրա հիման վրա անցկացնի, այսպես կոչված «կապիտալիս-տական ռացիոնալիզացիան»:

Այժմ անցնենք խորհրդային սոցիալիստական հաշվառմանը:

Պրոլետարական պետութիւնն ունի միասնական ամբողջական տնտեսութիւն, վոր գործում է պլանի հիման վրա, և Միութեան առանձին ձեռնարկներն այդ ամբողջական տնտեսութեան անբաժան մասերն են հանդիսանում: Այդ միասնական ժողովրդատնտեսական պլանի կատարման հաշվառումը խորհրդային հաշվառման հիմնական բովանդակութիւնն է հանդիսանում: Այդ պլանը յուրաքանչյուր տնտեսական կազմակերպութեան մեջ բաժանվում է իր սրգանական մի շարք մասերին—առդ կամ առ-ձիճ պլանների, և այս վերջինում առանձին պլանների՝ տնտեսութեան յուրաքանչյուր մասի համար, յուրաքանչյուր մեքենայի, յուրաքանչյուր խանութի, յուրաքանչյուր տնտեսաշարակային բրիգադի և այլն և այլն: Այս իսկ հիման վրա խոր-հրդային հաշվառումն առանձին տնտեսական մարմնի շրջանակում պարզակված հաշվառում չի: Տնտեսաշարակի կիրառումը ներկայումս չափազանց եյական նշանակութիւն ունի: յուրաքանչյուր առանձին ձեռնարկի, նրա ամեն մի մասի համար, բայց այդ հաշվառումը մի-ասնական ընդհանուր պլանի ամբողջական սոցիալիստական հաշվառ-ման մի մասնիկն է միայն: Իրա համար ել առանձին ձեռնարկների և նրա մասերի հաշվառումն ամբողջական հաշվառման միայն առանձին ճշգրտերն են կազմում. դա միայն հաշվառման աշխատանքի ֆունկ-ցիոնալ բաժանումն է ըստ առանձին տնտեսական քիջների և այդ պատճառով խորհրդային հաշվառման դերը բարձրանում է արդեն մինչ վորջ ժողովրդական տնտեսութեան հաշվառման աստիճանը:

Յեկ այսպես—խորհրդային հաշվառման տեսլիւն և հիմնական առանձնահատկութիւնն այն է, վոր այդ հաշվառումը հանդիսանում է ժողովրդական տնտեսութեան պլանի և նրա մասերի կատարման հաշվառում և միաժամանակ այդ նույնի պլանավորման զենք:

Այդ պատճառով հաշվառումը հասարակական և քաղաքական հրս-կայական նշանակութիւն ունի: Խորհրդային կարգերը պահանջում են աշխատավորութեան լայն մասնակցութիւն սոցիալիստական տնտե-սութեան շինարարութեան գործում: Ուստի հաշվառումը մեղանում

պետք է այդ մասնաների սեփականութիւնը դառնա՝ հնարավորու-թիւն տալով նրանց գիտակցաբար մասնակցիլ տնտեսական աշխա-տանքում, իսկ այստեղից նաև ժողովրդական տնտեսութեան զեկա-վարման գործում:

Հաշվառումը հսկայական վերահսկական նշանակութիւն ունի: Կապիտալիստական հաշվառումը գործի վարմանը վերահսկելու հնարա-վորութիւնն է տալիս միայն առանձին սեփականատիրոջ (տերերի) շահերի տեսակետից, իսկ խորհրդային հաշվառումը հնարավորութիւնն է տալիս թե զեկավար մարմիններին և թե ամբողջ բանվոր դասա-կարգին՝ վերահսկելու յուրաքանչյուր տնտմարմնի, յուրաքանչյուր տնտեսվարի աշխատանքը: Այստեղ հաշվառումը համաժողովրդական վերահսկողութեան հնարավորութիւնն է ստեղծում:

Այժմ խորհրդային հաշվառման միջանի ներքին առանձնահատ-կութիւնները մասին:

Արտադրութեան հաշվառման մեջ մեզնում հսկայական նշանա-կութիւն ունի աշխատանքի արտադրողականութեան և ինքնարժեքի իջեցման արտացոլումը, սակայն այլ հիման վրա, քան այդ տեղի ունի կապիտալիստական արտադրութեան մեջ: Այնտեղ աշխատանքի ար-տադրողականութիւնն արտահայտում է բանվորների խիստ շահա-գործման մեծութիւնը: Այնտեղ ինքնարժեքի իջեցումը նշանակում է կապիտալիստների դասակարգի կողմից հավելլալ արժեքի մեծ չափով յուրացում: Մեզ մոտ աշխատանքի արտադրողականութիւնը հարկա-վոր է արտադրական ուժերի զարգացման և տնտեսութեան սոցիալիս-տական տարրերի ուժեղացման համար, վորը բանվոր դասակարգին տանում է դեպի նրա կուլտուրական և կենսական մակարդակի բարձ-րացում: Աշխատանքի մեծ արդիւնավետութիւնը մեղանում բարձրաց-նում է աշխատավարձը, վորը և ավելացնում է բանվորին ընկնող արդյունքի հասարակական բաշխման չափը և հասցնում բանվորական որվա կրճատման: Դնքնարժեքի իջեցումը հսկայական միջոցներ է ազատում սոցիալիստական շինարարութեան համար և իրագործվում է սոցիալիստական ռացիոնալիզացիայի միջոցով, վորը Համկ (բ) և XV համագումարի ձեռնարկմամբ կաշանում է «նոր տեխնիկա մոցնելու, աշխատանքի կազմակերպումը բարելավելու, բանուժի վորակը բարձ-րացնելու» բանորը կրճատելու և խտացնելու» մեջ:

Խորհրդային հաշվառման կատարելագործված առանձնահատկու-թիւններից պետք է լինի նաև սոցիալիստական հատուկ աշխատանքի ձեերի հաշվառման արտացոլումը, վորը միանգամայն ոտար է կապի-տալիստական արտադրութեանը և վորը կարտացոլի սոցմրցման, հար-վածայնութեան, հանդիպական արտֆինալլանների արդյունքները և այլն:

Կապիտալիստական հաշվառման վերջնական նպատակը ձեռնարկի շահի հաշտնաբերումն է: Խորհրդային Միութեան ձեռնարկներում, վոր-

րոնք իրենց բնույթով հետեւողական սոցիալիստական տիպի ձեռնարկություններ են, բանվորի շահագործում և հավելյալ արժեք չկա, քանի վոր չկա և կապիտալիստների դասակարգ: Բայց խորհրդային միությունը չի կարող տնտեսապես զարգանալ, չեթե նա տարեցտարի չստեղծի իր համար սոցիալիստական կուտակման ֆոնդ՝ ընդլայնված վերարտադրության համար: Ներկա շրջանում, ինչպես մենք արդեն նշել ենք, տնտեսվարկը հանդիսանում տնտեսութունը դեկավարելու հիմնական մեթոդը, իսկ դա անպայման պահանջում է «յուր յեկամուտները և ծախսերը ուրելով հաշվել, վորպես ամենանվազ ծախսումները խթանման միջոց, ալդ հիման վրա առավելագույն չափի կուտակումներ անելու նպատակով» («Большевик» № 8, 1931 թ. լեր. 55): Այստեղից սոցիալիստական կուտակման մոմենտը մեղմում հսկայական նշանակութուն ունի: Ընկ. Ստալինը տնտեսավարների 1931 թ. 23-ը հունիսի կոնֆերանսում արտասանած իր ձառում ասել է՝ «կուտակման տեսակետից վորն է նորը և առանձնահատուկը մեր արդյունաբերության զարգացման մեջ: Նորն այն է, վոր կուտակման հին աղբյուրներն արդեն չեն բավականացնում արդյունաբերության հետագա ծավալման համար: Այն է, վոր անհրաժեշտ է ուրեմն շոշափել կուտակման նոր աղբյուրներ, ուժեղացնել հները, չեթե իսկապես մենք ցանկանում ենք պահպանել և զարգացնել ինդուստրացման բոլորիկյան տեմպերը»:

Ապա ընկ. Ստալինը նշեց կուտակման այնպիսի մոմենտ, ինչպիսին ինքնարժեքի իջեցումն է. «Իսկ ի՞նչ բան է ինքնարժեքի իջեցումը: Դուք գիտեք, վոր ինքնարժեքի իջեցման չուրաքանչյուր տոկոս նշանակում է 150—200 միլիոն ուրբլու կուտակում արդյունաբերության ներսում»:

Կապիտալիստական հաշվառումն ինչքան ավելի բարդ, ավելի խճողված է, այնքան ավելի լավ է կապիտալիստի համար, վորովհետեւ նա ուրիշներից թագցնում է իր «առևտրական գաղտնիքը»:

Մեզանում հաշվառումը, պրոլետարիատի ձեռքը հասարակական արտադրության նկատմամբ վերահսկողության միջոց առնով, պետք է կառուցված լինի, վորքան կարելի չէ, պարզ և աշխատավոր լայն մասսաների համար մատչելի: Հաշվառման պարզեցում, նրա ռացիոնալիզացիա, նրան հասկանալու մատչելիություն, — այն խորհրդային հաշվառման նկատմամբ ունեցած հիմնական պահանջները:

Այժմ խորհրդային հաշվառման ևս մեկ առանձնահատկության մասին: Լինելով խորհրդային տնտեսության ամբողջության հաշվառում և միայն իր կատարման կարգով բաժանվելով ըստ առանձին տնտեսական կազմակերպությունների, հաշվառումը բնականորեն պետք է լինի միատեսակ, պետք է կառուցված լինի միասնական սկզբունքների վրա:

Կապիտալիստական հաշվառումը, վորպես առանձին ձեռնարկու-

թյունների սահմաններում իրագործվող և վորպես առանձին սեփականատիրոջ շահերի համար տարվող հաշվառում, պարզ է, վոր նման միատեսակութուն չի պահանջում: Մինչդեռ խորհրդային հաշվառման հիմնական բոլոր սկզբունքները պետք է միանգամայն նման լինեն միշտ և ամենուրեք, այսինքն անպայման պետք է սահմանվեն հիմնական որենսդրական վորոշումներով, իսկ վորպես վերջիններիս զարգացում և լրացում՝ համապատասխան գերատեսչությունների կանոններով և ցուցմունքներով:

Յեւլ ալդպես, հետևյալ հիմնական առանձնահատկությունները բնութագրում են խորհրդային տնտեսության հաշվառումը.

1. խորհրդային հաշվառումը հանդիսանում է միասնական տնտեսության ամբողջական հաշվառում, պահպանելով դրա հետ միասին իր հսկայական նշանակութունը չուրաքանչյուր տնտեսության, կազմակերպության համար, վորպես տնտեսական հաշվարկը և ուրելու կոնտրոլը չուրաքանչյուր նման կազմակերպության շրջանակում իրագործելու անհրաժեշտություն:

2. խորհրդային հաշվառումը արտահայտում է ամբողջ ժողովրդական տնտեսության պլանի կատարումը, արտահայտում է տնտեսական պրոցեսներն իրենց ամբողջ ծավալով և ալդպիսով հանդիսանում է վողջ արտադրության և մթերքների բաշխման հաշվառում, այսինքն պլանի կատարման հաշվառում, իսկ այստեղից ել նշույթ է տալիս հետագա պլանավորման համար:

3. խորհրդային հաշվառումը, սոցիալիստական ռացիոնալիզացիայի և ձեռնարկների ավելի կատարելագործված տեխնիկական բազայի վրա կատարած վերակառուցման շնորհիվ, պետք է արտացոլի ինքնարժեքի իջեցման մոմենտը, արտացոլի աշխատանքի արտադրողական բարձրացումը, աշխատանքի սոցիալիստական մեթոդների արդյունավետությունը:

4. տնտեսական հաշվարկի պահանջների և ընդլայնած վերարտադրության անհրաժեշտության հիման վրա, խորհրդային հաշվառումը պետք է չեկամուտների և ծախսերի խիստ հաշվառում տանի և, հակառակ ձեռնարկային «շահի», հաշտաբերի սոցիալիստական կուտակման չափը:

5. խորհրդային հաշվառումն իր հիմնական սկզբունքներով պետք է միատեսակ լինի, ամենից առաջ հնարավորություն տալով իր տրվալներն ի մի բերելու ամփոփումներում և արտահայտի խորհրդային տնտեսության վողջ ամբողջությունը:

6. խորհրդային հաշվառումն ամբողջապես պետք է լինիթարկվի պրոլետարիատի դասակարգային խնդիրներին՝ կուտակցության գլխավոր գծի համար տարվող ալջաբարում: Խորհրդային հաշվառումը պետք է դասակարգային կովի գեներ լինի՝ կապիտալիզմի դեմ: Խորհրդային հաշվառումը պետք է սպաս դրված լինի սոցիալիստական շինարարությանը:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվառումը և նրա հետ կապված վերահսկողությունն անհրաժեշտ է տնտեսական ամեն կարգի և արտադրություն լուրաքանչյուր ձևի համար: Մենք արդեն նշեցինք Կ. Մարքսի ասածն այն մասին, վոր հաշվառումն անհրաժեշտ է անդամ մանր ապրանքարտադրողի համար, չնայած վերջինս, իր տնտեսության փոքրություն և գործարքները պարզության պատճառով, «հաշվային գիրքը միայն իր գլխում» կարող է տանել:

Առավել ևս հաշվառումը պետք է մեծ կապիտալիստական տնտեսության մեջ, Կ. Մարքսն այսպես է ասում այս մասին. «գրքեր վարելը վորպես ամբողջ պրոցեսի իդեալական միացումն ստուգելու միջոց, դառնում է այնքան ավելի անհրաժեշտ, ինչքան ավելի պրոցեսն ընդարձակում է մինչ հասարակական չափերի և ինչքան ավելի նա կորցնում է զուտ անհատական բնույթը» («Капитал», հատ. 2, էջ 88):

Անհրաժեշտ լինելով կապիտալիստական տնտեսության մեջ, հաշվառումը բացառիկ եչական նշանակություն ունի Մորերդային Միության պլանային տնտեսության մեջ:

Մորերդային տնտեսության համար հաշվառման նշանակությունը նրան ամենից ցայտուն արտահայտված է Վ. Ի. Լենինի խոսքերով. «Սոցիալիզմը — դա ամենից առաջ հաշվառում է» շատ այլ տեղեր կարելի է գտնել Վ. Ի. Լենինի յերկերում հաշվառման նշանակության և նրա հետ կապված վերահսկողության մասին: Որինակ՝ «հաշվառում և վերահսկողություն — ահա գլխավորը, վոր պահանջվում է կոմունիստական հասարակության առաջին ֆազի ճիշտ գործունեությունը կանոնավորելու համար» (հատ. XIV, մասն II, էջ 379), կամ «սոցիալիստական ապարատի ինքը տաններողը՝ դա համապետական հաշվապահությունն է, մթերքների արտադրության և բաշխման պետական հաշվառումը» (նույն տեղ, էջ 231):

Հաշվառման նշանակությունը, նպատակալից ներկա շրջանում, լիքը մենք տնտեսությունը վարում ենք տնտեսաշարիկի հիման վրա, միշտ ընդգծված է կուտ. համագումարների և կուտակցության առանձին ղեկավարների կողմից: Այսպես, որինակ՝ ընկ. Մուրոտովը սոցիալիստական արդյունաբերության աշխատակիցների 1931 թ. փետրվարի 3-ի Համաժողովին ասել է. «Կոմիտեի անդամները արտասանած իր ճառում նշեց, վոր մեր տնտեսական ձեռնարկությունները պարտավոր են գործով հասնել արտադրական բոլոր տարրերի ճիշտ հաշվառմանը և նրանց ֆինանսական ճիշտ արտահայտմանը, ինչպես ձեռնարկության և նրա առանձին ցեխերի համար, նույնպես և տնտեսավորման համար՝ ամբողջությունը վերցրած». նա նշեց Համ. Կ. (բ) ԿԿԿ այն վորոշումը, ուր ասված է, վոր ձեռնարկությունը տնտեսաշարիկի փոխադրելն ուժանդակում է արտադրության գործունեության ռացիոնալ դրված-

քին և մասսաներին այդ գործունեությունը ծանոթացնելու գործին:

Հաշվառման հսկայական նշանակությունը կոլտնտեսություններում նշված է Համ. Կ. (բ) ԿԿԿ հունիսյան (1931 թ.) պլենումի կողմից այն հ՝ «առանց հաշվառման հնարավոր չե կոլտնտեսության, վորպես խոշոր տնտեսության, գոյությունը», իսկ Կ. Կ. 1931 թ. ոգոստոսի 2-ի վորոշմամբ բոլոր կուտ. կազմակերպություններին առաջարկված է իրենց աշխատանքի առանցք համարել, ի միջի այլոց, նաև «հաշվառման գործի դրվածքը»: Արդ, ինչով է բացատրվում ճիշտ հաշվառման նշանակությունը և այստեղից էլ՝ նրա կատարյալ անհրաժեշտությունը: Այս բացատրվում է նրանով, վոր հաշվառումը արտացոլում է բոլոր տնտեսական պրոցեսները, վորոնց այլ կերպ հնարավոր չի հետևել, հետևաբար և կարգավորել: Հաշվառումը մի տեսակ կինոփապովն է, վորտեղ նշվում, ղեկավարում են ինչպես առանձին մոմենտները, նույնպես և նրանց միասնությունը. բայց նրանք նշվում են վոր թե առանձին նկարների ձևով, այլ բոլորը կապակցվելով, պատճառներն ու հետևանքները պարզելով, արդյունքները հայտարարելով:

Հաշվառումը կարևոր նշանակություն ունի ամենից առաջ տրնտեսաշարիկի անցած յուրաքանչյուր տնտեսական կազմակերպության սահմաններում: Այստեղ նա աշխատանքի կանոնավոր կազմակերպման գործին է հանդիսանում, նպաստում է պլանային սկզբունք սահմանելուն և անցկացնելուն, ինչպես և տնտեսաշարիկը իրականում պահպանելուն: Այնուհետև հաշվառումն այստեղ տնտեսավար-ղեկավարին իր աշխատանքի վերահսկողության հնարավորություն է տալիս, տրամադրելով նրան ճշտիվ տվյալներ ինչպես իր վողջ աշխատանքի, նույնպես և նրա առանձին մասերի վերաբերյալ:

Կարգավորող և պլանավորող կազմակերպություններին, հաշվառումն անհրաժեշտ է այն չափով, վորքան վոր նա նյութ է տալիս ձեռնարկության աշխատանքի, առաջադրանքների կատարման ստուգման և առաջիկա պլանային կառուցումների համար:

Բանվոր դասակարգին տալով վերահսկողության միջոց և նյութ՝ տնտեսության ղեկավարման գործում զիտակցաբար մասնակցելու համար, հաշվառումը դառնում է պրոլետարիատի դասակարգային գորեղ զենքը, մեր տնտեսության մեջ ավելի լայն սոցիալիստական շինարարություն ծավալելու համար:

Հարցեր կրկնադրյալն համար

1. Միատեսակ և արդյոք հաշվառումը տնտեսական բոլոր կարգերում:
2. Վորոնք են կապիտալիստական հաշվառման հիմնական առանձնահատկությունները:
3. Ինչո՞ւ կապիտալիստական հաշվառումը պարփակվում է յուրաքանչյուր առանձին ձեռնարկության շրջանակում:



4. Վճիռն է կապիտալիստական հաշվառման վերջնական նպատակը:

5. Ինչպե՞ս է կայանում կապիտալիստական և խորհրդային հաշվառման տարբերությունը տնտեսական պրոցեսների լայն ընդգրկման հարցում:

6. Ինչպե՞ս են ընդգրկվում խորհրդային տնտեսություններում հաշվառման ներքին բովանդակություն առանձնահատկությունները՝ կապիտալիստական հաշվառման համեմատությամբ:

7. Վերոհիշյալ են խորհրդային հաշվառման հիմնական առանձնահատկությունները:

8. Ի՞նչ պետք է արտացոլի խորհրդային հաշվառումը կապիտալիստական «շահ»-ի փոխարեն:

9. Ի՞նչ նշանակություն ունի հաշվառումը առանձին ձեռնարկության համար:

10. Ի՞նչ նշանակություն ունի հաշվառումը պլանավորող և կարգավորող մարմինների համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերադառնալով իր առաջ դրված խնդիրները կատարի, հաշվառումը պետք է կազմակերպված լինի գիտական խիստ սկզբունքների հիման վրա: Առանց նման սկզբունքներ մշակելու, հաշվառումը կդառնար թվաբանական դասարկ հաշվառում, իրենից կներկայացներ չմտածված, միմյանց հետ չկապակցվող թվական տվյալների միացում, թվեր, վորոնք վոչ մի դեպքում չեն լին կարող ուրվագծել տնտեսական պրոցեսները և չեն կարող ապահովել նրանց վերլուծությունը:

Այստեղից պետք է հատուկ գիտական գիտելիքներ լինի, վորն ուսումնասիրի տնտեսական հաշվառման հարցերը և պարզի նրա կառուցման հիմնական սկզբունքները:

Այդ գիտության հիմնական խնդիրը պետք է կայանա նրանում, վոր խորհրդային տնտեսության սոցիալ-տնտեսական ստրուկտուրայի համապատասխան հաշվառման ճիշտ կառուցվածք ստեղծի, ամենից առաջ ժողովրդական տնտեսության պլանի կատարումը հաշվի առնել:

Տնտեսական հաշվառման զարգացման ընթացքում պետք է լինի մոմենտ տարբերել. ամենից առաջ պետք է ստեղծել հաշվառման ճիշտ պլան, ապա անհրաժեշտ է մշակել հաշվառման ճիշտ մեթոդներ և, ի վերջո, անհրաժեշտ է մշակել հաշվառման տեխնիկան:

Դրա համար էլ խորհրդային հաշվառման գիտության մեջ պետք է յերեք մաս տարբերել՝ 1) հաշվառման կառուցման սկզբունքների ուսմունք, 2) հաշվառման մեթոդների ուսմունք և 3) հաշվառման տեխնիկայի ուսմունք:

Այս մասերը հատուկ են մեր թված հաշվառման բոլոր տեսակների համար, այդ պատճառով էլ մեր գասընթացի բովանդակությունը չի փոխվի այն բանից, վոր մենք հիմնականում միայն բախնասային հաշվառում ենք վերցնում:

Այժմ մեր գիտության անվան հարցը: Բուրժուական տեսությունը նրան հաշվեգիտություն էր անվանում, դրանով ընդթաղրելով նրա միայն տեխնիկական կողմը: Հաշվարկում «հաշվի» միջոցով: Այս անվան մեջ յերևան է գալիս բուրժուական գիտականների ձգտումը՝ այս գիտությունը միշտ ներկայացնել վորպես գիտություն, վոր կանգնած է քաղաքակրթությունից և դասակարգային պայքարից դուրս: Մինչդեռ դասակարգային հասարակության մեջ չկա և չի կարող լինել ապագասակարգային գիտություն:

Այստեղից էլ բուրժուական «հաշվեգիտություն» տեսություն մեջ «ստացվեց» տեսություն անջատումը պրակտիկայից, և տեսությունը, պրակտիկայից բաժանված լինելով, դառավ «անառարկա»: Բնորոշ է, վոր բուրժուական տեսությունը նույնիսկ ամբողջ «հաշվեգիտություն» բաժանում էր յերկու առանձին մասերի — տեսական՝ վոր կոչվում էր «հաշվեգիտություն» և գործնական՝ վոր կոչվում էր հաշվետարություն:

Այս դրույթը միանգամայն սխալ է, քանի վոր խիստ գիտական մարքս-լենինյան հասկացողությամբ դոյություն չունի անկախ տեսություն և անկախ պրակտիկա:

Գիտության յուրաքանչյուր բաժինը կապված է պրակտիկայի հետ և պրակտիկայի յուրաքանչյուր մոմենտ յուսավորվում է տեսությամբ:

Յե՛կ «տեսությունը», իր բոլոր ուղիներով պետք է պրակտիկայի հետ անքակտելի կապի միջոցով զարգանա, և՛ պրակտիկան էլ իր հերթին դադարում է «կույր» լինելուց, յերբ նա ճիշտ տեսությամբ է յուսավորվում:

«Հաշվեգիտություն» վորպես տեսության նախկին անջատումը պրակտիկայից, այդ տեսությունը «անառարկա» յեր դարձնում: Այս իսկ պատճառով մեր գիտություն մեջ «տեսական»-ի և «գործնական»-ի բաժանում տեղի ունենալ չի կարող:

Մեր գիտության անունը պետք է ընդգրկի խորհրդային հաշվառման զարգացման ուղիներով: Իսկ այդ ուղին, ինչպես մենք արդեն նշեցինք, տանում է դեպի հաշվառման բոլոր ճյուղերի միացումն ու միասնական սոցիալիստական հաշվառում ստեղծելը, իսկ այնտեղից էլ դեպի միասնական գիտություն: Այդ գիտության սահմաններում են պետք է ճյուղավորվեն հաշվառման տարբեր մեթոդները: Այս պատճառով միասնական այդ գիտության մեր մասը «Խորհրդային հաշվառման բաղադրարկային մեթոդ» կարելի յի անվանել:

Պետք է նկատել, վոր բաղադրարկային հաշվառումը «Бухгалтерский учёт» («Հաշվապահական հաշվառում») կոչվելու հետևանքով այս գի-

տութիւնն ել կոչվում է «Бугалтерия» («Հաշվապահութիւն»)։ Այս բառը ծագում է գերմաներէն չերկու բառից Buch (գիրք) halten (պահել) և նշանակում է գրքեր վարել։ Այստեղից՝ բուխալտերիան բնորոշում է հաշվառման տեխնիկայի զարգացման միայն առաջին ետապը, յերբ վերջինս կիրառվում էր բացառապէս գրքերում։

Ներկայումս «գիրքը» հաշվառման մեջ արդեն ամբողջապէս անցել է անցյալի գիրկը և հին անվանումը, վոր բնորոշում էր հաշվառման միայն տեխնիկան, և վորն այժմ համարւոյս գոյութիւնն չունի, չպետք է կիրառվի։ Այդ անվանումը միայն թյուրիմացութեան մեջ է ձգում խորհրդային հաշվառման բնույթի և էությունն նկատմամբ։ Այս բանը մենք մատնանշել ելինք առաջուց։

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տնտեսական սիստեմի բաղադրիչ բարդութիւնների և տարբերութիւնների հետեանքով հնարավորութիւնն չկա հաշվառման մեջ, նամանավանդ նրա ուսումնասիրութեան առաջին շրջանում, սպառիչ տեղեկութիւններ տալ հաշվառման մեջ յեղած այն բոլոր առանձնահատկութիւնների մասին, վորոնք պետք է ընութադրեն տնտեսութեան յուրաքանչյուր առանձին ճյուղ։

Այստեղ մենք կանդ ենք տունում հաշվառման այն հիմնական սկզբունքների վրա, վոր հատուկ են տնտեսութեան բոլոր ճյուղերի համար, գիտութեան այդ մասը պետք է կազմի հաշվառման ընդհանուր տեսութիւնը։ Բայց հաշվառման այդ ընդհանուր սկզբունքները չեն կարող իրական կյանքից կտրված լինել, նրանք տրվում են պրակտիկայի հիման վրա և լուսավորում են զանազան տեսութիւններին հաշվառման մոմենտները։

Ժողովրդական տնտեսութեան զանազան բնագավառների հաշվառման հարցերի ավելի խոր ուսումնասիրութիւնը պետք է տան հաշվառման հետեւյալ ճյուղային տեսակները — արդյունաբերական ձեռնարկների հաշվառումն իր հետագա բաժանումներով ըստ արդյունաբերութեան ճյուղերի, խորհրդային առևտրի հաշվառումը, գյուղատնտեսական ձեռնարկների և կազմակերպութիւնների հաշվառումը, վարկային հիմնարկների հաշվառումը և այլն։

Սակայն հաշվառման բոլոր այս «ճյուղային» տեսակները խստորեն հիմնված են ընդհանուր տեսութեան վրա։

Նրանցում խոսքը վերաբերում է միայն հաշվառման մանրամասնութիւնների ավելի խոր ուսումնասիրութեանը համաձայն գործնական աշխատանքի առանձնահատկութիւնների։ Հաշվառման ընդհանուր տեսութիւնը կյանքից կտրված չէ, նա ընդգրկելով ամբողջը, պետք է ընդգրկի և նրա բաղադրիչ մասերը, այսինքն լինի և ճյուղային, բայց միայն առանց հատուկ մանրամասնացման։

Մանրամասնացումը ճյուղային տեսակների խնդիրն է, վորոնք վոչ այլ ինչ են, քան միայն ընդհանուր տեսութեան հետագա լայնացումն ու խորացումը։

Հարցեր կրկնադուրյան համար

1. Ի՞նչ հիմնական խնդիրներ պետք է դնի իր առաջ խորհրդային տնտեսութեան հաշվառման գիտութիւնը։

2. Ինչո՞ւ «հաշվեգիտութիւն» անունը տեղ չպետք է ունենա և վորն է մեր դասընթացի ամենից համապատասխան անունը։

3. Վո՞րն է «հաշվառման ընդհանուր տեսութիւնը» և «հաշվառման ճյուղային տեսակները» և ի՞նչ փոխհարաբերութեան մեջ պետք է լինեն նրանք։

4. Յուլյց տպէք ճյուղային հաշվառման գլխավոր տեսակները։

5. Ինչո՞ւ ճյուղային տեսակի հաշվառումները մանրազնին ուսումնասիրման դեպքում անհրաժեշտ է իմանալ հաշվառման ընդհանուր հիմունքները։

Բալանային հաշվառման ընդհանուր մեքողություն

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ 2-ՐԴ ՅԵՎ 3-ՐԴ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկա չերկրորդ թեմայից սկսվում է մեր դասընթացի հիմնական մասը — խորհրդային տնտեսական (բալանային) հաշվառման մեթոդությունների ուսուցումը: Առաջին թեմայում նշված հաշվառման գիտությունների հիմնական խնդիրների համաձայն մենք պետք է տանք հաշվառման կառուցման սկզբունքը, իսկ հետո միայն անցնենք հաշվառման մեթոդները շարադրելուն: Հաշվառման բովանդակությունը և նրա ուղղությունը վորոշում են տնտեսությունը, այսպես կոչված — բալանային կառուցվածքով: Դրա համար առաջինը, վորից մենք պետք է սկսենք մեր ուսումնասիրությունը, դա բալանային հասկացողության սահմանումն է, նրա բովանդակության և կառուցվածքի խորացումն է:

Յեվ այդ կազմի չերկրորդ թեմայի բովանդակության գլխավոր մասը:

Բալանային կառուցվածքը հասկանալով, մենք այնուհետև պետք է անցնենք տնտեսական մասսաների և պրոցեսների շարժման հաշվառման մեթոդների ուսումնասիրությանը:

Բալանային հաշվառման ելույթներն այն է, վոր բալանային հաշվառման կարգով տարրալուծվում է առանձին հաշիվներ, վորպես իր հաշվառման մասերի, և հաշվառումն իրագործվում է այդ հաշիվներով, բայց դրա հետ միասին չի խզվում այն կապը, վոր կա հաշիվների և բալանային միջև, վորպես տնտեսություն և տնտեսական պրոցեսների ամբողջական արտացոլման: Յերրորդ թեմայի բովանդակությունը կազմում է հաշիվների ուսումնասիրությունը, նրանց դասավորումը և նրանցում գրանցումներ կատարելու ձևերը:

Այս չերկու թեմաների ուսուցման ժամանակ արդեն բավական չէ հասարակ ընթերցումը, ինչպես այդ արվում էր առաջին թեմայի նկատմամբ: Այստեղ անհրաժեշտ է նախ թեմաներում տված որինակներով և ապա ինքնուրույն կերպով լուծել գործնական մի շարք խնդիրներ, ինչպես բալանային կազմել, հաշիվներում զանազան գրանցումներ անել և այլն: Դրա համար այդ թեմաների վերջում, հարցերից բացի, գրվում են ինքնուրույն լուծելու խնդիրներ:

«Բալանա» բառը ծագում է լատինական չերկու բառից bis, վոր նշանակում է կրկնակի և lanx, վոր նշանակում է նժարներ: Այստեղից «բալանա» տերմինով վորոշում են չերկու հակադիր կողմերի հավասարությունը, վոր է 2 նժարների միջև:

Բալանան իրենից արտահայտում է շարժում, շարժման ծագման և վորնչացման պրոցես, մեկ տնտեսական դրույթյան փոխարինումն մյուսով՝ վորակապես տարբեր դրույթյամբ: Այդ շարժումը հաշվառման մեջ արտացոլելու համար կազմվում է բալանա, ուր մեկ նժարում պետք է լինեն ավանսավորված գումարները կուտակման հետ միասին, իսկ մյուսում միշտ հավասարամեծ միջոցների դասավորումը: Դրա հետ մեկտեղ, բալանայում պետք է արտահայտված լինեն տնտեսական բոլոր պրոցեսների պատճառներն ու հետևանքները, միշտ քանակապես միասնակ, բայց վորակապես տարբեր, վորը բալանային հաշվառման մեջ սահմանում է մեկ չերկույթի կապի ձևը մեկ ուրիշի և ամբողջի հետ:

Հաշվառման կարգով իրարից տարբերվում են բալանային չերկու հասկացողություններ՝ բալանա, վոր բնորոշում է միայն տնտեսական մասսաների կառուցումը ըստ նրանց դասավորման և աղբյուրների, և բալանա, վորն իրենով բնորոշում է բոլոր տնտեսական պրոցեսները:

Մենք մեր ուսումնասիրությունն սկսենք առաջին բալանայից, այսինքն տնտեսական պրոցեսների կառուցվածքը վորոշող բալանայից, աստիճանաբար լայնացնելով մեր բալանայի մասին հասկացողությունը: Նման բալանայի բովանդակությունը համառոտ կերպով արդեն ցույց է տրված — դա ավանսավորված գումարների դրույթյունն է մի կողմից նրանց դասավորման և մյուս կողմից ըստ այդ միջոցների դոցացման աղբյուրների:

Յուրաքանչյուր տնտեսական կազմակերպություն իր տնտեսությունը վարելու համար պետք է ունենա միջոցների վորոշ գումար, միջոցներ, վորոնք գտնվում են զանազան արժեքների մեջ: Միջոցների այդ դասավորումը, այն է, թե ինչի մեջ են նրանք գտնվում, ցույց է տալիս բալանայի առաջին մասն, այսպես կոչված ալիսիվը (լատինական agere գործի): Այսպիսով բալանայի ալիսիվը վորոշում է միջոցների վորտեղ գտնվել: Նա պատասխանում է այն հարցին, թե ինչի մեջ են գտնվում տնտեսական միջոցները: Առաջիկա մանրամասնորեն քննություն չառնելով ալիսիվի բոլոր մասերը, կարելի չէ ասել, վոր միջոցները հիմնականում կարող են գտնվել շինքերի և կառուցումների, մեքենաների և սարքավորումների — (աշխատանքի գործիքների), զանազան նյութերի (աշխատանքի սարքերի), մեքենաների կամ ապրանքների, դրամի և ուրիշ տնտեսությունների ու անձանց (գերիտորներ) պահանջների մեջ և այլն: Շենքերն ու կառուցումները,

մեջենաները ու սարքավորումները և նյութերը կաղմում են արտադրության միջոցներ, իսկ ապրանքներն ու դրամը՝ շրջանառության միջոցներ: Այս հիմնական խմբերն են կազմում և ակտիվը:

Բալանսի յերկրորդ մասը պատկերվում է կոչվում (լատինական patti-կապել): Պատկերվում է սույն աշխատանքի, թե վերաբերի, ինչ աղբյուրներից և ինչ կարգով են ստացվել յեղած միջոցները: Հետևաբար պատկերվում է միջոցների աղբյուրներն են վորոշում:

Նման աղբյուրները հիմնականում յերեքն են. 1) պետական ֆոնդ. պետ. ձեռնարկությունների համար, փախտերերի մուծումներ ու կողմնակալությունների համար արվող անվերադարձ մուծումներ, 2) վարկավորում — փոխառություններ և վարկեր: Սրանք ժամանակավոր միջոցներ են, քանի վոր նրանք հետագայում պետք է վերադարձվին և 3) կուտակումներ, վոր գոյացել են նախընթաց գործունեության հետևանքով և վորոշ, ձեռնարկություններում թողնելու պատկերվում, ձեռնարկի սեփական միջոցներն են ավելացնում: Այսպիսով պատկերվում է միջոցների ամբողջությունը, բայց միայն ստացման և աղբյուրների գոյացման տեսանկյունից:

Այստեղից պարզ պետք է լինի, վոր ակտիվը, պարզելով թե միջոցները ինչպես են դասավորված, իսկ պասսիվը — թե վորտեղից են նրանք ստացված, պետք է իրար միշտ հավասար լինեն: Դա միանշանակաբար բնական պահանջ է, քանի վոր վորևե կարգով ստացված յուրաքանչյուր ուղբի ակտիվ է ստեղծում, իսկ այդ ուղբին պետք է պարփակված լինի վորևե արժեքի մեջ, այդ նույնը և պասսիվ է ստեղծում, քանի վոր պետք է ցույց տրվի նրա ստանալու աղբյուրը: Այժմ որինակի համար, վերցնենք պետական մեկ ձեռնարկի բալանս:

Այդ ձեռնարկը վորպես մշտական աղբյուր, պետությունից ստացած ունի 2.000.000 ուղբ. փոխառության ձանապարհով ներգրավված է 500.000 ու. լրացուցիչ միջոցներ և նախկին տնտեսական գործունեության հետևանքով ներքին կուտակումից ունի 100.000 ու.: Հետևաբար նրա մոտ յեղած միջոցներն ընդամենը կազմում են 2.600.000 ու.:

Այս միջոցները դասավորված են հետևյալ կերպ. կան շենքեր 1.200.000 ու., մեքենաներ 800.000 ու. դանադան նյութեր 400.000 ու., վորպես պարտք արված և ուրիշ ձեռնարկների և անձանց 175.000 ուղբ. և կան դրամական միջոցներ 25.000 ու.:

Գծադրական բալանսում պատկերանում է ուղղահայաց կերպով յերկու մասի բաժանված մի աղյուսակ, ուր ձախ կողմում տրվում է ակտիվը, իսկ աջ կողմում նրա հավասարամեծ պասսիվը: Բալանսային աղյուսակը, վոր նույնպես և բալանս է կոչվում, մեր ընտրած որինակի համաձայն հետևյալ ձևը կունենա.

Միջոցներ (ակտիվ)	Միջոցների աղբյուրներ (պասսիվ)
Շենքեր 1.200.000	Պետակ. ֆոնդ 2.000.000
Մեքենաներ 800.000	Փոխառ. և վարկեր 500.000
Նյութեր 400.000	Կուտակումներ 100.000
Դրամ. միջոց. 25.000	
Դրստոքներ 175.000	
	2.600.000

Իր աշխատի ձևով բալանսի աղյուսակը մեզ ցույց է տալիս տնտեսական միջոցների կառուցվածքն՝ ըստ իր միջոցների տեղավորման և աղբյուրների:

Հարցեր կրկնողության համար

1. Ի՞նչ է նշանակում «բալանս» բառը:
2. Ի՞նչ են արտահայտում իրենցից բալանսի ակտիվն ու պասսիվը և ինչո՞ւ նրանք միջև միշտ հավասարություն է ստացվում:
3. Վորո՞նք են ակտիվի հիմնական մասերը:
4. Վորո՞նք են պասսիվի հիմնական մասերը:
5. Գծադրական ձևով ինչպես է պատկերավորվում բալանսը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱԼԱՆՍԻ ՊԱՍՍԻՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Այժմ անցնենք բալանսի յերկու մասի ավելի մանրամասն քննությունը, ըստ վորում այդ քննարկումն սկսենք միջոցների բոլոր աղբյուրների՝ պասսիվի վերլուծությունից և ապա արդեն անցնենք միջոցների դասավորման՝ ակտիվի վերլուծության:

Պետական ձեռնարկների համար միջոցների առաջին աղբյուրը հանդիսանում է «պետական ֆոնդը»: Այդ աղբյուրը վորոշում է միջոցների այն չափը, վոր համապետական ֆոնդից հատկացվում է ավելի ձեռնարկությանը և ամրացվում նրան քիչ թե շատ տևական ժամկետով: Այս աղբյուրը մեծական է և սրա բաժին հանած համապետական միջոցներն ամբողջությամբ մտցվում են ձեռնարկի կանոնադրության մեջ:

Բալանսի պասսիվում այդ աղբյուրը «կառուցված է ֆոնդ» պետք է կոչվի: Պաշտոնական բալանսներում կանոնադրական ֆոնդը շարունակում է մնալ. մեր կարգերին անհամապատասխան «կանոնադրական կապիտալ» անվան տակ:

Միջոցների հետևյալ աղբյուրը կարող է լինել պետական բանկի վարկավորումը, վորը կազմում է վոչ թե տևական, այլ ժամանակավոր

իր Համերով շարունակ փոփոխվող աղբյուր, նախած անտեսական գործունեություն ընթացքին և պլանի կատարման: Այդ աղբյուրի Համեր անկալուն բնույթ ունի. նա կամ մեծանում է, կամ փոքրանում:

Միջոցների այդ աղբյուրը պատկերվում պետք է կոչել արդեն վոչ թի պետական ֆոնդ, այլ՝ պարսֆ պեսական բանկին:

Պատկերվում չեղած այս յերկու աղբյուրները ձեռնարկի ֆինանսական կապն են վորոշում վողջ պետություն հետ, վորպես նրա որդանական մասի:

Յիրորդ աղբյուրը ներքին կուտակումներն են, վորոնց տակ պետք է հասկանալ չեկամուսների հետևանքով ձեռնարկում թողած սոցիալատական կուտակումները: Այս, ինչպես և վերևում թված աղբյուրների միջոցները, պետություն սեփականություն է կազմում: Այստեղից միջոցների բոլոր այս յերեք աղբյուրները բնորոշում են ձեռնարկի կապը պետության հետ: Յեմ պետական նման ձեռնարկի բաղաձայ պատկեր, վերջիվերջո, ըստ ելույթյան մեկ աղբյուր է ցույց տալիս, այն է՝ համապետական միջոցների առանձնացում: Բայց այդ միաձե աղբյուրը, նախած նրա տարբեր բնույթին և ծագման, պետք է առանձին ցույց տրվի:

Վերցնենք փոքրիկ մի որինակ՝

Ձեռնարկը պետությունից ստացած ունի, վորպես մշտական աղբյուր, 3.000.000 ու. և բանկային վարկավորման կարողով՝ 800.000 ուրբ., բացի այդ, նախկին տարիներից կուտակումներ ունի 300.000 ուրբ.: Այդ կուտակումը թողնված է ձեռնարկին ալապիսի բաշխումով՝ 15.000 ու. կազմում է բանվոր-ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդը, 90.000 ու. բանվորական գյուտարարության ֆոնդը, 40.000 ու. բանվորության արտադրական-տեխնիկական լուսավորության ֆոնդը, 125.000 ու. ձեռնարկի արամադրության տակ է թողնված վորպես տնտեսման ֆոնդ և 20.000 ուրբ. էլ ողջմրցման ոժանդակման ֆոնդ:

Նկատենք, վոր բոլոր ֆոնդերն ալատեղ վերցնում ենք, վորպես բաշխված կուտակման մասեր: Վորոշ ֆոնդեր կարող են կազմվել կուտակումներից անկախ: Յեթև կուտակումը դեռ չի բաշխված, ապա նրա ամբողջ գումարը պատկերվում պետք է ցույց տրվի մեզ արդեն ծանոթ «կուտակում» (չբաշխված) անվան տակ:

Միջոցների աղբյուրները յերկու ձևի բաշխելու (պետություն կողմից առանձնացված միջոցներ և ներքին կուտակումներ) պատկերը հետևյալ պատկերը կունենա.

1. ԱՂԵՑՈՒՐՆԵՐ ՊԵՏ. ՖՈՆԴԻՑ

ա) Մշտական աղբյուր	
Կանոնադրական ֆոնդ	3.000.000
բ) Ժամանակավոր աղբյուր	
Վարկավորում պետական կողմից	800.000
	3.800.000

II. ՆԵՐՔԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ

Բանվոր-ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդ	25.000
Բանվորական գյուտարարության ոժանդակման	90.000
Բանվորական արտ. տեխնիկական լուսավորման	40.000
Ձեռնարկի արամադրության տակ տնտեսման	125.000
Մոլցմրցման ոժանդակման	20.000
	300.000

Ընդամենը պատկերվում 4.100.000

Այստեղ մենք տեսնում ենք, վոր պատկերվում միջոցների աղբյուրներ վորոշելով, միաժամանակ (ներքին կուտակումները գծով) վորոշում է նաև միջոցների նպատակը: Պետ. բանկի վարկավորումը հուլանպես վորոշակի նպատակային ողտագործման բնույթին է ցույց տալիս:

Մենք այստեղ պատկերվում յերկու մասի բաժանեցինք ըստ այդ աղբյուրների պետֆոնդի և ներքին կուտակման հատկանիշների: Մեզ սոցիալատական շինարարության մեջ հակադրական նշանակություն ունի համապետական միջոցների տնտեսումը և ներքին միջոցների ողտագործելու ձգտումը՝ առանց լրացուցիչ միջոցներ ներդրավելու:

Խ Ս Հ Մ Ա. Պ. Խ. 1931 թ. 23-ն հուլիսի վորոշումը (հրապարակված է «Известия»-ի 1931 թ. 26 (7-№ 204). Նշում է, վոր «1930 թ. վարկային ռեֆորմի անցկացման պրակտիկայի խոշոր թեթույթունից մեկը — տնտեսական մարմինների սեփական շրջանառում միջոցների դիմադրելությունը և սեփական ու փոխառած շրջանառում միջոցների ողտագործման պայմանների տարբերության վոչնչացումը»: Այդ պատճառով Ա. Պ. Խ. վորոշումը պահանջում է «սեփական շրջանառում միջոցների Համար համապատասխանեցնել նվազագույն պաշարի առկայությունն ապահովելու համար պահանջվող միջոցների Համար հետ, այն հաշվով, վոր «Պետական բանկը պետական ձեռնարկներին կարճատև վարկ հատկացնի միայն ճանապարհին չեղած արժեքները ֆինանսավորելու, արտադրության սեզոնային պրոցեսներն ապահովելու, հումույթի, վառելիքի, արտադրական և ոժանդակ նյութերի սեզոնային պաշարը կուտակելու, Համարած արտադրության մեջ ներդրումներն ապահովելու, պատրաստի բանվածքների և աղբանքների սեզոնային կուտակման, ինչպես և արտադրության ու աղբանքների շրջանառության ընթացքից բղխող այլ ժամանակավոր կարիքների հետ կապված ծախսերը ֆինանսավորելու համար»:

Բախանում սեփական և փոխառում միջոցներն ապիլի պարզ տարբերելու համար, հարմար կլինի բախանի պատկերում միջոցների աղբյուրները բաժանել նրա ուրիշ տեսակներին՝ ներքին միջոցների աղբյուրներ — վոր վորոշում է սեփական միջոցների Համար և ներդրված միջոցներ աղբյուրներ, վոր վորոշում է փոխառում միջոցների Համար:

Այդ գեղըում բախանի պատկերը կաեղադրվի ալապես.

I. ՆԵՐՔԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ֆանոնադրական ֆոնդ	3.000.000	
Ներքին կուտակումներ (մանր. տես նախընթ.)	300 000	3.300.000

II. ՆԵՐՔԻՆ ԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՒՏԱՆՈՒՄ

(Փոխառած միջոց. աղբյուրներ)	
Պետական կի վարկավորում	800.000
Ընդամենը պատսխիվում	4.100.000

Սակայն ձեռնարկում ներդրված միջոցների ուրիշ աղբյուրներ ել կարող են լինել. որինակ՝ պարտք ալ ձեռնարկներին, մարմիններին և անձանց: Այս աղբյուրը ժամանակավոր է և իր չափերով մշտապես փոփոխվող: Պատսխիվում այս աղբյուրը «պահանջատեր» (կրեդիտոր) է կոչվում, այսինքն՝ ձեռնարկներ, մարմիններ և անձինք, վորոնց պարտ է տվյալ ձեռնարկը:

Պատսխիվում բոլոր նման պահանջատերերն իրենց հերթին պետք է բաժանվեն առանձին խմբերի:

Հանրայնացված սեկտորի պահանջատերեր — սա միասնական տնտեսության սահմաններում կատարվող ներքին հաշվարկներն են: Այս ճանապարհով միջոցներ ներգրավելիս խորհրդային տնտեսության մեջ, նրա հանրայնացված սեկտորում շրջանառվող միջոցների ընդհանուր գումարը չի ավելանում. միայն միջոցները մեկ ուրիշ ձեռնարկից (կրեդիտորից) լցվում են տվյալ ձեռնարկի մեջ: Պատսխիվի այս մասը մենք «հանրայնացված սեկտորի պահանջատերեր» ենք անվանում:

Անհրաժեշտ է նշել, վոր վարկային ռեֆորմի պատճառով, ներկայումս նման ներքին հաշվարկներն իրենց մեծությամբ աննշան են դարձել:

Միանգամայն այլ բնույթ ունեն արտասահմանյան և մասնավոր պահանջատերերը: Այս աղբյուրն ավելալից է և հանրայնացված սեկտորի շրջանառու միջոցները: Պատսխիվի այս մասը «հանրայնացված սեկտորի պահանջատերեր» (և մասնավոր անձինք) ու արտասահմանյան պահանջատերեր ենք անվանում:

Պատսխիվի վերը ցույց տված դասավորումը (ընդհանր, բացի այստեղ նշածից, հետևյալով: Ձեռնարկը ներգրավել է՝ մասնավոր սեկտորից 50.000 ռ., արտասահմանից 100.000 ռուբլի և ներքին հաշվարկների կարգով հանրայնացված ալ ձեռնարկներից 15.000 ռուբլի:

Բալանսի պատսխիվի կառուցվածքը կստացվի.

I. ՆԵՐՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

(Տես նախկինը մեղմ և անփոփոխ)	3.300.000
--	-----------

II. ՆԵՐՔԻՆ ԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

(Փոխառու միջոցների աղբյուրներ)

1) Հանրայնացված սեկտորից	
ա) բանկային վարկավորման կարգով	
Պետական	300.000
բ) փոխադարձ հաշվարկների կարգով	
Հանրայնացված սեկտորի պահանջատերեր	15.000 815.000
2. Մասնավոր սեկտորից և արտասահմանից	
ա) Չհանրայնացված սեկտորի պահանջատերեր	50.000
բ) Արտասահմանյան պահանջատերեր	100.000 150.000 965.000
Ընդամենը պատսխիվում	4.265.000

Ընդհանուր դժեբով այսպես պետք է կառուցված լինի մեր պետական ձեռնարկների բալանսի պատսխիվը:

Յեթե մենք վերցնենք կոոպերատիվ ձեռնարկներն ու կապմակերպությունները, ապա վերջիններիս բալանսի պատսխիվները վորոշ տարրերով լից են կուռնհան: Սպառողական կոոպերացիայի միջոցների գլխավոր աղբյուրներն են՝ կոոպերացիոյ աշխատավոր բնակչության փայալուտակումները և ալ մուծումները, համապետական միջոցներից տրվող (ըացուցիչ վարկավորումը և ներքին կուտակումները (յեկամուտներից). իհարկե, կարող են լինել և ալ ներգրավված միջոցներ՝ հանրայնացված, ինչպես և մասնավոր սեկտորից:

Առաջին աղբյուրը (բնակչությանից ստացածը) չորս տեսակի պետք է բաժանել՝ փայալվարներ, մուտքի վարներ, ժամանակավոր ալանդներ և ստացված կանխավճարներ:

Սպառողական կոոպերացիայի միջոցների գլխավոր աղբյուրը փայալվարն է: Այս անվան տակ ել պետք է ցույց տրվի այդ աղբյուրը բալանսի պատսխիվում: Պաշտոնական բալանսներում նրանք ցույց են տրվում անհամապատասխան — «Փայի կապիտալ» անվան տակ: Փայալվարներն այնպիսի կալուն աղբյուր չեն, ինչպիս պետական ձեռնարկների կանոնադրական ֆոնդն է: Նոր անդամներ ընդունելով կամ փայալվարն ավելացնելով, նրանք կարող են ավելանալ, իսկ անդամները հեռանալու ժամանակ կարող են և պակասել:

Մուտքի վճարներ մտցնում են կոոպերատիվին նոր անդամագրվող փայալները: Մուտքի վճարները փայալվարներից տարրերվում են նրանով, վոր վերադարձման լենթակա չեն և ալ իսկ պատճառով նրանք միջոցների մշտական աղբյուր են հանդիսանում. բալանսի պատսխիվում նրանց ալպես ել պետք է կոչել՝ «Մուսի վճարներ»: Կոոպերատիվի միջոցների ուժեղացման համար փայալների տված միջոցները կոչվում են՝ «ավանդներ»: Ծիշտ ալպես ել միջոցների կամ ապրանքների միջոցման դիմաց կոոպերացիայի ստացած ժամանակավոր կանխավճարները պատսխիվում «ստացած ավանդներ» անունն են կրում:

Բացի դրանցից՝ կոոպերացիայի միջոցների աղբյուր կարող է լինել համաժողովրդական միջոցների անվերադարձ հատկացումները (որինակ՝ աղքատացված գույքը)։ Այս աղբյուրը մշտական է և պատասխանատվություն պետք է ցույց տալ «ամբաստանելի Ֆունդ» անունով։ Պաշտոնակատն բաղնաններում այս աղբյուրը միացվում է փայլավճարների հետ և ցույց տրվում անհամապատասխան՝ «հիմնական կապիտալ» անվան տակ։

Իր մնացած կողմերով կոոպերատիվների բաղնանի պատասխիվը պետ. ձեռնարկների բաղնանի պատասխի նման է։ Միայն հանրաշնայացված սեկտորի սահմանում չեղած ներքին հաշվարկները կոոպերատիվ բաղնաններում չերկու մասի պետք է բաժանել՝ ա) սպառկոոպերացիայի սխեմայի ներսում չեղած հաշվարկներ և բ) պետ. ձեռնարկների հետ չեղած հաշվարկներ։ Այսպիսով կատացվի կոոպերատիվ բաղնանների պատասխի կառուցման հետևյալ սխեման՝

I. Ներքին աղբյուրներ

- ա. մուտքի վճարներ,
- բ. անբաժանելի ֆոնդ,
- գ. փայլավճարներ,
- դ. ստացված ավանդներ,
- ե. ստացված կանխավճարներ և
- զ. կուտակումներ.

II. Ներգրավված միջոցների աղբյուրներ (փոխառու միջոցների) աղբյուրներ

1. Հանրաշնայացված սեկտորից՝

- ա. պետ. վարկավորման կարգով Պետբանկից
- բ. փոխադարձ հաշվարկների կարգով՝
- գ. կոոպերատիվ սխեմայի պահանջատերեր,
- դ. պետ. ձեռնարկների պահանջատերեր։

2. Մասնավոր սեկտորից և արտասահմանից՝

- ա. չհանրաշնայացված սեկտորի պահանջատերեր,
- բ. արտասահմանյան պահանջատերեր։

Բայց կոոպերատիվ բաղնանի նման տեղադրումը կարող է առաքել ձուլված հանդիպել յուրաքանչյուր առանձին ձեռնարկի տեսակետից։ Նրանց նկատմամբ կարելի է ավանդներն ու ավանդները վճարել ներկայի աղբյուրների, այլ ներգրավված միջոցների շարքը դասել. ուստի կոոպերատիվ բաղնանի պատասխի հետևյալ վարչանալ կարելի է

I. Ներքին աղբյուրներ

(տես նախկին, առանց ավանդների և կանխավճարների)

II. Ներգրավված համապետական միջոցների աղբյուրներ

Վարկավորում՝ Պետբանկի միջոցով։

III. Կոոպերացված բնակչության միջոցների լրացուցիչ ներգրավում

ավանդներ,

ստացված կանխավճարներ.

IV Փոխփոխությունների յեղ վարկերի կարգով ներգրավված միջոցների աղբյուրներ

1. Հանրաշնայացված սեկտորից փոխադարձ հաշվարկների կարգով՝ կոոպերատիվ սխեմայի պահանջատերեր, պետ. ձեռնարկների լուծումների պահանջատերերը.

2. Չհանրաշնայացված սեկտորից և արտասահմանից՝ չհանրաշնայացված սեկտորի պահանջատերեր, արտասահմանյան պահանջատերեր։

Այստեղ բանակային վարկավորման աղբյուրի նմուշը մենք առանձին խմբի մեջ առանձնացրինք։ Դա ցանկալի է. պատասխում կոոպերացիայի կողմից համապետական միջոցների ոգտադրման չափն ավելի պարզ արտացոլելու համար։ Ներկայումս սպառողական կոոպերացիան անցնում է առանց բանակային վարկավորման աշխատանքի ձևին։ Այդ պատճառով նրա բաղնանի պատասխում Պետբանկի վարկավորում չի լինի։

Առանձին են խմբավորված նաև կոոպերացման լենթարկված աշխատավոր բնակչության լրացուցիչ ներգրավման միջոցների աղբյուրները (փայլավճարներից բացի), քանի վոր այդ աղբյուրի չափը, կոոպերացիայի դարգացման համար, բնակչության ունեցած ակտիվությունն է վորոշում, իր միջոցները մորթիլիցացիայի լենթարկելու գործում։

Յեղ աղբյուր, պատասխիվ ցույց է տալիս միջոցների աղբյուրներն ու նրանց նպատակը։ Հետևաբար, պատասխիվ տնտեսություն մեջ չեղած միջոցներն է քննում, սակայն նա քննում է նրանց մուտքի աղբյուրների և առանձին դեպքերում նրանց նպատակի ու ոգտադրման կարգի տեսակետից։

Հարցեր կրկնողության համար

1. Պետական ձեռնարկներում միջոցների լենթ հիմնական աղբյուրներ կան և ինչպես են կոչվում նրանք։

2. Վորճնք են միջոցների ժամանակավոր աղբյուրները:
3. Վորճնք են հանդիսանում ներքին աղբյուրներ և վորճում սեփական միջոցների չափը: Վորճ աղբյուրներ չեն վորճում ներդրված միջոցները:
4. Միջոցների աղբյուրները նշելուց բացի՝ էլ ինչը կարող է արտահայտություն գտնել բալանսի պատասխանում:
5. Ինչ հիմնական միջոցների աղբյուրներ կան կոտպերացիայի ձեռնարկություններում և ինչպես է դա արտահայտվում կոտպերացիայի բալանսի պատասխանում:
6. Կոտպերացիայի բալանսում պատասխան կապուցման ինչպիսի վարկաններ կարելի չե տալ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱԼԱՆՍԻ ԱԿՏԻՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վերևում մենք պարզեցինք, վոր պատասխան վորճում է միջոցների ստացման աղբյուրները: Սակայն, թե ինչի մեջ են ալ միջոցները պարփակված, ինչպես են նրանք գետեղված դանազան տեսակի արժեքների մեջ, այդ մենք իմանում ենք բալանսի ակտիվից:

Կ. Մարքսի վերլուծություն ճամաճայն, անտեսություն միջոցները հիմնականում կարող են բաժանվել արտադրության վորճում և շրջանառության վորճում: չեղած միջոցների: Դրամական միջոցները վերաբերում են շրջանառության մեջ չեղած միջոցներին: Պետք է ի նկատի ունենալ, վոր վարկային ունեություն հետո, անգամ հաշվարկներ սահմանելու պատճառով, դրամական միջոցները խորհրդանշարկների դրամարկներում աննշան գումարներ են մնում մանր հաշվարկների և աշխատավարձ վճարելու համար:

Սույն ձեռնարկներում Պետրանիկին կցված դրամարկներ կան, վորոնք և սպասարկում են տվյալ ձեռնարկին: Այդ պատճառով նման խոշոր ձեռնարկների բալանսի ակտիվից դրամական միջոցները միանգամայն վերանում են:

Բաց դրամական միջոցները մնում են վարկային հիմնարկների, կոտպերացիայի, բնակ-շինկոտպների, բնակարանային տրեստների վարչությունների և այլոց բալանսներում: Դրամական միջոցները բար աննշան գումարներով (այդ դեպում ակտիվում, «դրամադր» անունն ստանալով, կամ թե չե բանկերի խնայդրամարկների ընթացիկ հաշիվներում, այս դեպում «ընթացիկ հաշիվ» անունն ստանալով): ԱՊՊ 1931 թ. 23 հունիսի վերը նշած վորճումից հետո ձեռնարկի ազատ շրջանառության միջոցները պահվում են Պետրանիկում (պատասխան արտահայտվող բանկային վարկավորումներից առանձին) և ակտիվում

կոչվում են «հաշվառված հաշիվ Պետրանիկի հետ» կամ ուղղակի՝ «Պետրանիկի հաշիվ»:

Հիմա անցնենք նյութական արժեքներին: Նրանցից մի քանիսը արտադրության վորճում սպասարկող միջոցներն են: Նրանց կարելի չե յերկու մասի բաժանել՝ 1) աշխատանքի միջոցներ (орудие—գործիքներ) և 2) աշխատանքի առարկաներ «Капитал» Կ. I стр. 122):

Աշխատանքի միջոցներին (орудие—գործիքներին) են վերաբերում շենքերը, մեքենաները, գործիքները (инструменты), և այլն: Նրանք այդ անունով էլ լինում են բալանսի ակտիվում: Արտադրության պրոցեսի սպասարկելու ընթացքում աշխատանքի միջոցներն իրենց արժեքը, ըստ իրենց հաշվելու չափի, աստիճանաբար փոխանցում են արտադրության առարկաներին, ըստ վորճում պահպանելով իրենց նախնական ձևն ու չափը, վորոնք պայմանավորված են տվյալ գործիքների ծառայության ժամկետով:

Փորձից հայտնի չե, թե միջին հաշվով վորքան կարող է դիմա-նալ աշխատանքի միջոցը, որինակ՝ վորքան հայտնի մեքենա:

Յենթադրենք, թե աշխատանքի պրոցեսում նա իր սպառողական արժեքը պահելու չե միայն վեց որ: Այդ դեպքում նա միջին հաշվով ամեն որ կորցնում է իր սպառողական արժեքի $\frac{1}{6}$ -րդ մասը, ուրեմն և որդա արտադրանքին է հանձնում իր արժեքի $\frac{1}{6}$ -ը: Այս ձևով հաշվում են աշխատանքի բոլոր միջոցների հաշվելը, այսինքն նրանց սպառողական արժեքի ամենորյա կորուստը և, դրա համաձայն, նրանց արժեքի ամենորյա փոխանցումը արտադրանքին (նույն տեղ եջ 140):

Աշխատանքի առարկաները հիմնականում չերեք տեսակի կարելի չե բաժանել՝ ա) հումուլթ կամ հում նյութեր (որինակ՝ բաժրակը տեքստիլ արտադրության մեջ), այսինքն այն հիմնական նյութերը, վորոնք արտադրության պրոցեսում փոխում են իրենց ձևը, փոխանցվում արտադրանքի՝ կազմելով նրա «սուբստանցը»: («Կապիտալ»)

բ) ոժանդակ նյութեր (որինակ՝ ներկեր և այլն), վորոնք արտադրության պրոցեսում կորչում են, բայց հանդես են դալիս արտադրանքի հատկության մեջ, (նույն տեղ) և վերջապես գ) վառելիք, վորն արտադրական պրոցեսում «անհետ կորչում է» (նույն տեղ), բայց իր արժեքը փոխանցում է արտադրության արտադրանքին:

Այժմ անցնենք շրջանառության վորճում նյութական առարկաներին: Նման առարկաներ են աշխատանքի արտադրանքները: Այս լամբը ընդհանուր անունը «ապրանք» է: Իսկապես, «ապրանք» հասկացողությունը կապիտալիստական կարգերի սեփականությունն է, բայց և մեղ մոտ էլ կապի ապրանքային ձևը մնում է «ինչպես հանրայնացված սեկտորի ներսում, այնպես էլ, առանձնապես նրա՝ չհանրայնացված սեկտորի հետ կապվելու շրջանում» («Большевик» 1931 թ. № 8 էջ 52):

Քանի վոր աշխատանքի արտադրանքները յերկակի նշանակու-
թյուն ունեն—մի կողմից՝ լայն սպառման առարկաներ են (անդի,
արգյունաբերական ապրանքներ) և վորոնք անմիջականորեն մարդ-
կանց կարիքների բավարարմանն են ծառայում և մյուս կողմից՝ ար-
տադրական սպառման արտադրանքներ, այսինքն արտադրության
նոր միջոցներ, հետևաբար և բալանսի ակտիվում անհրաժեշտ է այս
հատկանիշներով անվանել նրանց: Բայց այդ միայն այն դեպքում
կարելի լիք անել, յեթե արտադրության պրոցեսում ստեղծվող հասա-
րակական ֆոնդերը բաժանվելին անհատական և արտադրական սպառ-
ման ֆոնդերի: Մինչ այդ, բաժանում կատարելը չափազանց դժվար
է, քանի վոր միևնույն առարկան կարող է վերածվել և՛ արտադրա-
կան սպառման, և՛ անհատական սպառման առարկայի:

Այժմ վերցնենք ձեռնարկություն, վորին պարտք են այլ տնտե-
սություններ: Այստեղ տեղի կունենա միջոցների ղեկավարման դեր-
տոնների պարտքում: Այս խումբը ձեռնարկի համար նրա շրջանառու-
թյունից միջոցների ժամանակավոր հանումն է նշանակում:

Նման հանումը, յեթե միջոցները դերիտորների պարտքում գե-
տեղվում են հանրայնացված սեկտորի սահմաններում, միայն տվյալ
ձեռնարկին է վերաբերում:

Այստեղ տեղի չի ունենում միջոցների տեղափոխություն՝ տվյալ
ձեռնարկից դերիտորի ձեռնարկի մեջ: Այդ խումբը մենք «նախադ-
նացված սեկտորի դեպիսորներ» ենք անվանում: Ընդհակառակը մաս-
նավոր (որինակ՝ կոնտրակտացիոն կանխավճարներ) և արտասահմա-
յան դերիտորների միջոցներ հատկացնելը ստեղծում է միջոցների
հանում, վոչ միայն տվյալ ձեռնարկի, այլ և վողջ հանրայնացված սեկ-
տորի համար:

Սրանց բաժանելով յերկու յենթախմբի, անվանենք «մառնավոր
դեբիտորներ» և «արտասահմայան դեբիտորներ»:

Ճիշտ այնպես, ինչպես վարկային ռեֆորմից հետո պատսիվում—
հանրայնացված սեկտորի կրեդիտները փոքր դեր են խաղում, նույն-
պես և աննշան է ակտիվում հանրայնացված սեկտորի դերիտորների
տեսակարար կշիռը: Հասկանալի չէ, վոր աննշան պետք է լինի նաև
մասնավոր ու արտասահմանյան դերիտորների տեսակարար կշիռը:

Վորպես շրջանառու միջոցների հանում, դերիտորների խմբին
մոտ է կանգնած նաև մասնակցության իրավունքը, վորն արտահայտ-
վում է վորեն ձևական փաստաթղթով: Նման մասնակցության իրա-
վունքը վկայող փաստաթղթերին են վերաբերում այլ ձեռնարկների
փայերն ու ակցիաները:

Ակցիաներ և փայեր են կոչվում բաժնետիրական ընկերության
տնտեսական ֆոնդի բաժինները, ինչպես և փաստաթուղթը, վորը
հաստատում է, թե քանի բաժինն է պատկանում փաստաթղթատի-
ր: Այդ ակցիաները կամ փայերը բալանսի ակտիվում ճամանակ-

ցության իրավունք» են ստեղծում, քանի վոր ձեռնարկը նման ակ-
ցիա կամ փայ ձեռք բերելով, մասնակցում է ուրիշ ձեռնարկին՝ մի
վորոշ բաժնով: Ակցիա գնելով, ձեռնարկն իր շրջանառությունից վո-
րոշ գումար է դուրս հանում, հանձնելով այն ուրիշ ձեռնարկի, վորով
և իրեն համար պահանջի իրավունք է ստեղծվում:

Ձեռնարկի միջոցներին մի մասը կարող է գտնվել արժեթղթերի,
այսինքն պետ-փոխառությունների պարտատոմսերի մեջ:

Միջոցների դասավորման այս ձևն իրենից ներկայացնում է
միջոցների ժամանակավոր հանումն միայն տվյալ ձեռնարկի համար:

Այդ միջոցները հանձնվում են համապետական սեփականությանը,
յերկրի ինդուստրիալացման և ժողովրդական անտեսության սոցիալիս-
տական տարրերի ուժեղացման համար: Այդ պատճառով ել այստեղ
մենք միայն միջոցների ներքին վերաբաշխում ունենք:

Այսպիսով միջոցների տեղավորումը, վոր ցույց է տրվում բալանսի
ակտիվով, հիմնական հետևյալ խմբերն ունի՝

I. Արտադրարկյան վոլոսում յեղած միջոցներ

աշխատանքի գործիքներ (орудие),

աշխատանքի առարկաներ:

II. Շրջանառարկյան վոլոսում յեղած միջոցներ

ա) ձեռնարկում՝

դրամական միջոցներ,

ապրանքներ,

բ) հանրայնացված սեկտորի ներսում՝

խորհրդային ձեռնարկների ակցիաներ և փայեր,

արժեթղթեր,

հանրայնացված սեկտորի դերիտորներ,

գ) հանումներ մասնավոր սեկտորին և արտասահմանին՝

մասնավոր դերիտորներ,

արտասահմանյան դերիտորներ:

Ներկայացնենք՝ որինակով:

Վորպես հիմք, վերցնենք նախկին (տես պատսիվի կառուցման
բաժինը) բալանսի պատսիվը 4.265.000 ռուբ. ընդհանուր գումարով:
Ընդունենք թե միջոցներն այսպես են գտնվում՝ կան շինքեր և
կառուցումներ 1.060.000 ռուբլու, մեքենաներ և սարքավորում 160.000
ռուբլու, հումուլթ 1.258.000 ռուբլու, ոժանդակ նյութեր 40.000 ռուբ-
լու, ապրանքներ 1.200.000 ռուբ.—խորհրդային ձեռնարկների ակցիա-
ներ և փայեր 175.000 ռուբլու, համայնացված սեկտորի դերիտորներ
7000 ռուբլու, արտասահմանի դերիտորներ 17.000 ռուբլու, դրամ
դրամարկղում 3.000 ռուբլու և ազատ գումարներ Պետականում 400.000
ռուբլու: Կատարվի հետևյալ ամբողջական բալանսը:

Անգլիկ

Պատիվ

I. Միջոցներ արտադրության վճարում

ա) աշխատանքի գործիքներ (орудие)	
Շենքեր և կռուցում.	1.000.000
Մեքենաներ և սարքավոր.	16.000
բ) աշխատանքի առարկաներ	
Հումուլթ	1.258.000
Ոժանդակ նյութեր	40.000
	2.858.000

II. Միջոցների օգտագործության վճարում

ա) ձեռնարկում	
Դրամարկ	3.0000
Ապրանքներ	1.200.000
բ) հանրային սեկտորի ներսում	
Պետական ըստ հաշվարկ.	400.000
Պորտի ձեռք աղյ. և փայլեր	175.000
Հանր. սեկտ. դերձիտորներ	7.000
գ) մասնավոր անձանց մոտ և արտասահմանում	
Մասնավոր դեպիտորներ	5.000
Արտասահմ. դեպիտորներ	17.000
	1.407.000
	4.265.000

I. Ներքին աղբյուրներ

ա) կանոնադրական ֆոնդ	3.000.000
բ) կռուսակույցները	
ԲԳԲՖ	25.000
Բանդյուտ. ոժանդ. ֆոնդ	90.000
Արտ. տեխ. լուս.	40.000
Տնտեսման	125.000
Սոցմբյման	32.000
	3.300.000

II. Ներգրավված միջոցների աղբյուրներ

(փոխառած միջոցների աղբյուրներ)	
1. հանրայնացված սեկտորից	
ա) բանկային վարկավ. կարգով	
Պետական	800.000
բ) փոխադրված հաշվ. կարգով	
Հանրային սեկտորի կրեդիտորներ	15.000
2. Մասնավոր սեկտոր և արտասահմանում	
ա) Մասնավոր կրեդիտորներ	50.000
բ) Արտասահմ.	100.000
	965.000
	4.265.000

Այսպիսով բախանան իր ամբողջությամբ տալիս և տնտեսության դրության ուսումնասիրությունը. նրա միջոցների դասավորման և աշխատիչների աղբյուրների տեսակետից: Դրա համար միշտ և անպայման ակտիվի և պասսիվի հավասարութուն պետք է լինի: Չափազանց կարևոր նշանակություն ունի ակտիվում՝ բոլոր միջոցների բաժանումն ըստ նրանց շարժունություն:

Այստեղ պետք է տարբերել հիմնական և շրջանառու միջոցները: Հասկանալի է, թե, վոր շրջանառության մեջ լեղած գումարները բոլորն էլ շրջանառու լին և միշտ շրջանառության մեջ են գտնվում, թե մուտք են լինում և թե դուրս են գալիս տնտեսությունից:

Արտադրության մեջ լեղած գումարները, ինչպես մենք գիտենք, բաժանվում են լերկու տեսակների՝ աշխատանքի գործիքներ և աշխատանքի առարկաներ:

Նրանց շրջանառության աստիճանը միանգամայն տարբեր է:

Աշխատանքի գործիքները շրջանառությունը չուրառեսակ է: Միջոցների այս մասը չի շրջանառում իր սպառողական ձևով, այլ շրջա-

նառության մեջ և մտնում միայն նրա արժեքը, և այն էլ միայն աստիճանաբար, այն չափով, վորքան նա որեցոր փոխանցվում է արտադրանքին, վորը շրջանառում է վորպես ապրանք:

Այդ մասի գործունեություն ամբողջ ժամանակամիջոցում նրա արժեքի վորոշ մասը մնում է նշանակված իրենում, պահպանում է իր ինքնուրույնությունն այն ապրանքների նկատմամբ, վորոնց արտադրությանն ոժանդակում է նա: Այսպիսի առանձնահատկության շնորհիվ հոստատուն կապիտալի այս մասը հիմնական կապիտալի ձև է ստանում: («Կապիտալ» հ. 2, էջ 101):

Աշխատանքի առարկաները շրջանառու միջոցներ են: «Յեթե ոժանդակ և հում նյութերը, վորոշ արտադրանք ստեղծվելիս, ամբողջապես սպառվում են, ապա նրանք արտադրանքին են փոխանցում իրենց արժեքը: Այդ պատճառով վերջինս») արտադրանքի կողմից մացվում է շրջանառության մեջ, վեր է ածվում փողի, իսկ փողից նորից ապրանքի արտադրման տարբերի: Նրա շրջանառությունը չի ընդհատվում, ինչպես հիմնական կապիտալի շրջանառությունը, բայց հետևողականորեն, առանց ընդհարումների անցնում է կերպարանափոխության ամբողջ շրջապտույտը (նույն տեղ էջ 105—106):

Շրջանառությունից ժամանակավորապես հանված միջոցներն սպառարկում են շրջանառության (обращение) վորտը և վարկալին հարաբերությունների պատճառով, ժամանակավորապես հետաձգվում են պարտք դերձիտորից ստանալը: Այդ պատճառով բոլոր աշխատիչները, վորպես հետագայում վճարվելիք մուտքերից մարվողներ՝ հանդիսանում են շրջանառության (обращение) վորտի միջոցներ: Բայց նրանց շարժունության աստիճանը կախված էլինի նրանց գետեղման տեղությունից: Որինակ՝ փայերն ու ակցիաներն ունեն ակիլի յերկարատե գետեղում և այդ պատճառով էլ պակաս շարժուն են, քան մյուս շրջանառու միջոցները:

Սովորական դերձիտորական պարտքն ակիլի շարժուն է:

Հարցեր կրկնողության համար

1. Թվեցեք ակտիվի բոլոր հիմնական, գլխավոր մասերը:
2. Վոր միջոցներն են սպառարկում արտադրության վորտը և վորոնք շրջանառության վորտը:
3. Ի՞նչ տարբերություն կա աշխատանքի գործիքների և աշխատանքի առարկաների շրջանառության մեջ:
4. Ինչպե՞ս պետք է բաժանել ակտիվում վորջ գերտորական պարտքերը և ինչո՞ւ:
5. Ի՞նչ է փայը և ակցիան:
6. Ի՞նչ բան են արժեթղթերը և ի՞նչ նշանակություն ունեն նրանք քաղանաի ակտիվում:

*) Արժեքը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ԲԱՆԱԿԱՆՈՒՄ (ՀԱՇՎԱԹՎԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒՄՈՒՆ ՄԵԹՈԴԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ)

Մինչ այժմ մենք խոսում եյինք տնտեսական մասսաները զեկա-վարող բալանսի մասին: Բայց բալանսում արտացոլվում եր նաև տնտեսական բոլոր պրոցեսները՝ միշտ պահպանելով ակտիվի և պաս-սիվի հավասարակշռությունը, նրանց փոխադարձ հավասարությունը:

Թվաբանական նման հավասարությունը բալանսի կառուցվածքի պատճառով միանգամայն բնական է և անխուսափելի. բալանսում միշտ հետևյալ հավասարությունը կլինի:

Պասսիվը (ավանսավորված գումարներ պլյուս կուտակումներ):

Ակտիվը (տեղավորված միջոցներին):

Հաշվառման տեխնիկայում այդ հավասարությունը չի խանգար-վում նաև տնտեսական պրոցեսների արտացոլման ժամանակ: Հաշվա-րումը տնտեսական շարժումն է արտացոլում, դրանով հանդերձ յուրա-քանչյուր առանձին գործառնություն համար հաշվառման մեջ սահման-վում է սկզբնական և վերջնական: Այս պատճառով յուրաքանչյուր պրոցես բալանսում չերկակի արտահայտություն է ստանում, վորն է ակտիվին ու պասսիվին մշտական հավասարություն է տալիս, քանի վոր տնտեսական պրոցեսը միջոցների և նրանց աղբյուրների անընդ-հատ շրջապտուտն է, մեկ ձևից մյուսին անցնելն է:

Ամենից առաջ կան այնպիսի պրոցեսներ, վորոնք միջոցների միայն տեղավորման ձևն են փոխում, մեկ ձևը վերածում են ուրիշ ձևի: Այսպես որինակ՝ դրամի վերածումն արտադրանքի և այլն: Այս դեպքում ակտիվի միջոցներում ստացվում է չերկակի փոփոխություն՝ յեղք են լինում մեկ միջոցներ և հանդես են գալիս ուրիշ միջոցներ: Բալանսի ընդհանուր գումարն այս դեպքում մնում է նախկինը: Սա կտա մեզ բալանսներում պրոցեսներ արտահայտելու առաջին ձևը:

Ապա լինում են այնպիսի պրոցեսներ, վորոնք տնտեսություն համար նոր միջոցներ են հանդես բերում, վորը և բնականաբար դեպի աղբյուրների ավելացումն է տանում, այսինքն ավելացնելով ակտիվը, ավելացնում են նաև պասսիվը: Այդ դեպքում բալանսի ընդհանուր գումարները հավասար չափով ավելացնում են՝ ինչպես ակտիվում, նույնպես պասսիվում:

Սա կլինի պրոցեսները բալանսում արտացոլելու չերկրորդ ձևը: Վերջապես լինում են այնպիսի պրոցեսներ, վորոնք միայն մի-ջոցների աղբյուրն են փոխում, այսինքն միայն պասսիվը՝ հին աղ-բյուրը վոչնչացնելու հաշվին նոր աղբյուր առաջացնելով: Այս դեպքում պասսիվի մի մասի նվազման հաշվին մյուս մասում ավելացում է ստացվում, վորն առաջին ձևի նման, բալանսի ընդհանուր գումարը չի փոխվում:

Ներկայացնենք այս առանձին օրինակներով:

Վերցնենք կանխիկ դրամով գույք գնելու գործառնություն:

Այստեղ բալանսի ակտիվի չերակի փոփոխությունը կստացվի՝ վորոշ գումարով կնվազեն դրամական միջոցները և այդ նույն գու-մարով կավելանա գույքը:

Բալանսի ակտիվում հետևյալ փոփոխությունը կստացվի.

Ակտիվ	Բ Ա Ն Ա Ն Ս	Պասսիվ
Մեկ մասը (գույք) աճում է		Պասսիվը մնում է առանց փոքն փոփո- խություն.
Մեկ մասը (դրամ. միջոց) նվազում է.		
Բալանսի ընդհանուր գումարը մնում է նախկինը:		

Պրոցեսները բալանսում արտացոլելու այս ձևը բնութագրում է բոլոր այն տնտեսական պրոցեսները, վորոնք միջոցների զետեղման ձևի փոփոխություն են հանդիսանում, այսինքն վորոնք միայն ակտիվ են շոշափում: Գործառնության հետևյալ ձևը, միջոցների ավելացում տալով ի հաշիվ նոր աղբյուրների, շոշափում է ինչպես ակտիվը, նույն-պես և պասսիվը: Վերցնենք հումուլթ գնելու գործառնությունը, վորի վճարումը ժամանակավորապես հետաձգված է: Այս դեպքում հանդես են գալիս նոր միջոցներ, վոր պետք է արտացոլվեն մի կողմից ակ-տիվում՝ այստեղ միջոցների ավելացում տալով, իսկ մյուս կողմից պասսիվում՝ նշելով այնտեղ նոր աղբյուրը, այսինքն նորից ավելացում: Բալանսի փոփոխությունն արժեքման հետևյալը կստացվի.

Ակտիվ	Բ Ա Ն Ա Ն Ս	Պասսիվ
Մեկ մասը (հումուլթ) աճում է		Մեկ մասը (կրեդիտորներ) աճում է
Ընդհանուր գումարները՝ յե՛վ ակտիվում, յե՛վ պասսիվում հավա- սառ չափով ավելանում են:		

Այժմ մյուս օրինակը: Դրամարկից կրեդիտորին (Թե վորին՝ այդ միեևույն է) վճարված է պարտքը: Այստեղ նույնպես միջոցների դասավորման ձևի փոփոխություն չկա: Դրամարկում, դրամական միջոցները նվազեցնելով, մենք նոր վոչինչ ձեռք չենք բերում, այլ մարում ենք միմիայն մեր պարտքը, այսինքն նվազում է ակտիվը, միաժամանակ յեղք չեղած միջոցների չափով պասսիվում նվազում է և աղբյուրը:

Բալանսի փոփոխման սխեման հետևյալը կլինի.

Ակտիվ	Բ Ա Ն Ա Ն Ս	Պասսիվ
Մի մասը (դրամ. միջոց) նվազում է		Մի մասը (կրեդիտորներ) նվազում է
Ընդհանուր գումարները, ինչպես ակտիվում, նույնպես յե՛վ պասսի- վում հավասարաչափ նվազում են:		

Անցնում ենք այժմ այնպիսի գործառնությունների, վորոնք փոփոխում են միջոցների աղբյուրների բնույթը, այսինքն շոշափում են միմիայն պատասխիլը: Որինակ կրեդիտորները չեղյալ են համարում մեր պարտքի մի մասը: Այստեղ ակտիվում, տեղի չի ունենում միջոցների ավելացում կամ նվազում, այսինքն միջոցների ամբողջությունը մնաց անփոփոխ, բայց նրանց նախկին աղբյուրը (համապատասխան գումարով) փոխվեց. միջոցները կրեդիտորներից վերցրած պարտքի միջոցով ներգրավելու փոխարեն, ստացվեց նոր աղբյուր — չեկամուտ, վորը մեզ կուտակում կտա: Այստեղից փոփոխման հետևյալ սխեման կստացվի.

Ակտիվ	Բ Ա Լ Ա Ն Ս	Պասսիվ
Ակտիվը մնում է առանց փոփոխության		Մեկ մասը (կուտակում) աճում է Մեկ մասը (կրեդիտորներ) նվազում է

Բայանսի բնդհանուր գումարը մնում է նախկինը:

Բալանսում արտացոլման այս չորս ձևերով սպառվում են բոլոր տեսակի գործառնությունները, ըստ վորում մենք տեսնում ենք, վոր բոլոր գործառնությունները բալանսում չերկակի արտահայտություն են ստանում, վորի պատճառով և բալանսը, վորպես հավասարություն, միշտ պահպանվում է:

Պրոցեսները չերկու տեսակի բաժանելով՝ պրոցեսներ, վորոնք բալանսի մեջ միայն սեզ մատուցում են արտահայտվում, այսինքն կամ ակտիվում, կամ պասսիվում և պրոցեսներ, վորոնք բալանսի յեղի մասերում են արտահայտվում՝ մենք տնտեսական պրոցեսները բալանսում արտացոլելու չորս ձևը կստանանք:

Արտացոլում բալանսի մեկ կողմում.

Ա + Լ Ա —

բ) փոփոխությունների աղբյուրների կառուցվածքում այսինքն՝ պատասխիլում.

Պ + Լ Պ —

Այս փոփոխությունների հետևանքով սկզբնական բալանսի (մինչև գործառնությունը) ընհանուր գումարները չեն փոփոխվում:

2. Արտացոլում յեղի հակառակ կողմերում.

ա) միջոցների նոր ավելացում

Ա + Լ Պ +

բ) միջոցների նվազում

Ա — Լ Պ —

Այս դեպքում բալանսի դումարը փոխվում է կամ աճման կամ նվազման կողմը, բայց հավասարությունը պահպանվում է:

Այս է հաշվառման բալանսային մեթոդի ձևական կողմի ելությունը: Այս հաշվառումը չերկակի չի, վորովհետև յուրաքանչյուր տնտեսական գործառնություն չերկու տնտեսությունում է ունենում: Այս հաշվառումը հիրավի հաշվեկշռային է, վորովհետև անընդհատ պահպանվում է ակտիվի և պասսիվի հավասարությունը, նրանց հավասարամեծությունը:

Գործառնությունները չերկակի կարգով՝ արտացոլելով, բալանսային հաշվառումը տալիս է միաժամանակ նաև քանակային և վորակային հաշվառում: Որինակ՝ կանխիկ հաշվով հումուլթ գնելու գործառնությունը, առանձին մասերում քանակային փոփոխման արտացոլում տալով, միևնույն ժամանակ վորոշում է տնտեսությունից մեջ տեղի ունեցող վորակային փոփոխությունները, այսինքն՝ դրամական միջոցների վերածումն արտադրության միջոցների:

Այժմ այդ բոլորը ներկայացնենք որինակով.

Վերցնենք պետ. առևտրի մի ձեռնարկություն, վորտեղ պասսիվում մեկ տնտեսական ֆոնդ կա՝ 2.750.000 ու.:

Միջոցները հետևյալ ձևով են դասավորվում.

Դրամարկդում 5000., շենքեր և կառուցումներ 750.000 ու. գանադան տեսակի կահավորման գույք 18.000 ուրբլու, ապրանքներ 1.477.000 ուրբլու, և աղատ միջոցներ Պետ. բանկում 500.000 ուրբլի:

Այստեղից հետևյալ սկզբնական բալանսը կստացվի.

Ակտիվ	Բ Ա Լ Ա Ն Ս № 1	Պասսիվ	
Շենքեր, կառուցումներ	750 000	Կանոնադրական ֆոնդ	2.750.000
Դույք	18.000		
Դրամարկդ	5.000		
Պետ. բանկ ըստ հաշվ.	500.000		
Ապրանքներ	1.477.000		
	2.750.000		2.750.000

Առաջին գործառնություն. իրացված է (առաջժ պայմանական ձևով կհամարենք ինքնարժեքով իրացված) 800.000 ուրբլու ապրանք, վորի վճարը մուտք է արվել Պետությանի հաշվարկային հաշվով: Այս դեպքում տեղի կունենա միջոցների դասավորման ձևափոխություն: Ակտիվում կպակասի 800.000 ուրբլու ապրանք և կավելանա Պետությանի հետ ունեցած հաշվարկը: Կստացվի հետևյալ նոր բալանսը.

Ակախ

Բ Ա Լ Ա Ն Ս № 2

Պատիվ

Շենքեր և կառուցումներ . . .	750.000
Գույք	18.000
Դրամարկդ	5.000
Ապրանքներ (— 800000) . . .	677.000
Պետրանկ (+ 80.000)	1.300.000

2.750.000

Կանոնադրական ֆոնդ 2.750.000

2.750.00

Յերկրորդ գործառնություն. ձեռք է բերված խորհրդակցին ուրիշ ձեռնարկների փայեր և ակցիաներ 800.000 ուրբու և նրանց վճարը կատարված է Պետրանկի միջոցով: Այս գործառնությունը նման է առաջինին: Ակտիվում հանդես կգան ակցիաներ ու փայեր և համապատասխանորեն կնվազի Պետրանկի հետ ունեցած հաշվարկը: Կատացվի հետևյալ նոր բալանսը.

Ակախ

Բ Ա Լ Ա Ն Ս № 3

Պատիվ

Շենքեր և կառուցումներ . . .	750.000
Գույք	18.000
Դրամարկդ	5.000
Պետրանկ (— 800.000)	500.000
Ակցիաներ և փայեր (— 800000) .	800.000
Ապրանքներ	677.000

2.750.000

2.750.000

Յերրորդ գործառնություն. Գնված է 150.000 ուրբու ապրանք, վորի վճարը կատարված է Պետրանկի միջոցով: Այստեղ մենք տեսնում ենք մի կողմից՝ միջոցների ավելացում ակտիվում և մյուս կողմից՝ բանկի հետ ունեցած հաշվարկների նվազում՝ նորից ակտիվում: Կատացվի հետևյալ նոր բալանսը.

Ակախ

Բ Ա Լ Ա Ն Ս № 4

Պատիվ

Շենքեր, կառուցումներ . . .	750.000
Գույք	18.000
Դրամարկդ	5.000
Պետրանկ (— 1.500.000)	350.000
Ակցիաներ և փայեր	800.000
Ապրանքներ (+ 150.000)	827.000

2.750.000

Կանոնադրական ֆոնդ 2.750.000

2.750.000

Չորրորդ գործառնություն. Հանրայնացված սեկտորի ձեռնարկներից, առաջիկա առանց վճարելու, գնված է 750.000 ուրբու զանազան մանր կահավորում. ակտիվում միջոցներն ավելանալու պատճառով պատասխանում կավելանան միջոցների աղբյուրները: Կատացվի հետևյալ բալանսը.

Բ Ա Լ Ա Ն Ս № 5

Պատիվ

Շենքեր և կառուցումներ . . .	750.000
Գույք (— 750.000)	18.750
Դրամարկդ	5.000
Պետրանկ ըստ հաշվարկների .	350.000
Ակցիաներ և փայեր	800.000
Ապրանքներ	827.000

2.750.000

Կանոնադրական ֆոնդ 1.750.000
Հանրայնացված սեկտորի
կրեդիտորներ (+ 750) 750

2.750.000

Հինգերորդ գործառնություն. իրացված է (այնպես, ինչպես առաջին գործառնության ժամանակ հաշվեցինք ինքնարժեքով) 27.000 ուրբու ապրանք և վճարը մուտք է յեղել Պետրանկ:

Այստեղ միջոցների նվազում կատացվի — ակտիվում ապրանքը կավազասի և դրան համապատասխան կավելանան նույն ակտիվով Պետրանկում յեղած միջոցները:

Հետևյալ բալանսը կատացվի.

Բ Ա Լ Ա Ն Ս № 6

Պատիվ

Շենքեր, կառուցումներ . . .	750.000
Գույք	18.000
Դրամարկդ	5.000
Պետրանկ (+ 27000)	377.000
Փայեր և ակցիաներ	800.000
Ապրանքներ (— 27000)	800.000

2.750.000

Կանոնադրական ֆոնդ 1.750.000
Հանրայնացրած սեկտ. կրեդիտ . . 750

2.750.000

Վեցերորդ գործառնություն. Դրամարկդից տրված է կրեդիտորներին ի հաշիվ սլարաքի 300 ուրբու: Այստեղ միջոցները կավազասեն, այն է կավազասի զբամարկդի դրամը և դրան համապատասխան կնվազի միջոցների աղբյուրներից մեկը — հանրայնացված սեկտորի կրեդիտորները 300 ուրբով:

Կատացվի հետևյալ բալանսը.

Շենքեր կառուցումներ	750.000
Գույք	18.000
Դրամարկի (-300)	4.700
Պատրանի	377.000
Փայեր և ակցիաներ	800.000
Ապրանքներ	800.000

2.750.450

Կանոնադրական ֆոնդ	2.750.000
Հանրայնացրած սեկտ. կրեդի- տորներ (-300)	750

2.750.450

Յոթերորդ գործառնություն. կրեդիտորները մեր 450 ուրբլի պարտքը չեղյալ են հայտարարում: Տնտեսութիւն մեջ շրջանառվող միջոցների գումարն այսպեղ փոշ նվազում է և փոշ էլ աճում: Միայն միջոցների աղբյուրների բնույթի փոփոխութիւնն է տեղի ունենում: Պարտքի ձևով չեղած նախկին 450 ուրբլու փոխարեն կստացվի կուտակում: Կստացվի հետևյալ բաղանիք.

Շենքեր և կառուցումներ	750.900
Գույք	18.750
Դրամարկի	4.700
Պատրանի	377.000
Փայեր և ակցիաներ	800.000
Ապրանքներ	800.000

2.750.000

Կանոնադրական ֆոնդ	2.750.000
Հանրայնացվ. սեկտ. կրեդ. (-450) կուտակում (+450)	450

2.750.000

Այս գործառնություններից չերևում է, վոր տնտեսական պրոցեսներն ամբողջ հոսանքը միշտ արտահայտվում է բաղանիքում, վորն է իրենից ներկայացնում է, ինչպես տնտեսական միջոցների կառուցվածքի, նույնպես և նրանց աղբյուրների, բայց դրա հետ միասին նաև տեղի ունեցող տնտեսական պրոցեսների հաշվառվելն արտահայտությունը:

Այսպիսով բաղանիքին հաշվառվի ձևական կյուլթիւնն այն է, վոր հաշվառումը միշտ բաղանիքի սահմաններում է տեղի ունենում, արտացոլելով նրա մեջ քանակական և վորակական փոփոխությունները: Սրանով, բաղանիքին մեթոդը ապահովում է պլանի կատարման հաշվառումը, իսկ արժեքային չափանիշով հաշվելն ապահովում է ուրբլու վերահսկողութիւնը:

Հարցեր կրկնողության համար

1. Տնտեսական պրոցեսները ինչպե՞ս են արտացոլվում բաղանիքում և նման արտացոլման ինչպիսի՞ ձևեր կան:

2. Ձևական կողմից ինչպի՞ս է բնորոշվում հաշվառման բաղանիքին մեթոդի կյուլթիւնը:

ԽՆԴԻՐՆԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խ Ն Դ Ի Ր № 1

Հետևյալ տվյալների հիման վրա կազմել բաղանիքի աղյուսակ: Վորպես մշտական աղբյուր, պետ. ձեռնարկն ստացել է 1.000.000 ուրբլի և դասավորել այսպես՝ դրամական միջոցներ (դրամարկիւում) 2000 ու., աշխատանքի միջոցներ (գործիքներ) 300.000 ուրբլու, աշխատանքի առարկաներ 100.000 ուրբլու և ֆինացած դումարը գտնվում է ապրանքների մեջ:

Խ Ն Դ Ի Ր № 2.

Կոոպերատիվ ձեռնարկն ստացել է՝ փայավճարներ 150.000 ուրբլի, մուտքի վճարներ 2000 ուրբլի, աղագնացված ունեցվածք անհատույց ոգտագործման համար 70.000, դրամ դրամարկիւում 3.000 ուրբլի, շինքեր 70.000 ուրբլ. զանազան գույք 4.000 ուրբլու, իսկ ֆինացած գումարը գտնվում է ապրանքների մեջ:

Կազմել այդ ձեռնարկի բաղանիքին աղյուսակը:

Խ Ն Դ Ի Ր № 3.

Հետևյալ տվյալների հիման վրա տալ Պետձեռնարկի բաղանիքի աղյուսակը:

Պետութիւնից, վորպես միջոցների մշտական աղբյուր ստացված է 2.000.000 ուրբլի և վորպես բանկային վարկավորում, լրացուցիչ 36.000 ուրբլի: Միջոցները դասավորված են այսպես՝ ալ խորհրդային ձեռնարկներից ձեռք են բերվել 187.000 ուրբլու ակցիաներ և փայեր, կան 459.000 ուրբլու շինքեր և կառուցումներ, 750.000 ուրբլու մեքենաներ և սարքավորում, 863.000 ուրբլու հումուլթ և ոժանդակ նյութեր, 6000 ուրբլի հանրայնացված սեկտորի դերատորներ, ֆինացած գումարը գտնվում է պատրաստի արտադրանքի՝ ապրանքի մեջ:

Խ Ն Դ Ի Ր № 4.

Հետևյալ տվյալների հիման վրա կազմել բաղանիքի աղյուսակը: Կոոպերատիվ ձեռնարկը ստացել է փայավճարներ 334.000 ուրբլի, մուտքի վճարներ 3000 ուրբլի, անհատույց գումար 30.000 ուրբլի, կոոպերատիվի անդամներից վորպես ավանդ 10.000 ուրբլի և կանխավճարների ձևով 15000 ուրբլի:

Միջոցները դասավորված են այսպես՝ դրամ դրամարկիւում 1500 ուրբլի, ապրանքներ պահեստներում և խանութներում 300.000 ուրբլու, շինքեր և կառուցումներ 65.000 ուրբլու, զանազան գույք 8000

ուսուցիչ, այլ ձեռնարկների փայեր և ակցիաներ 15.000 ուսուցիչ. մնացած գումարը հաշվվում է դերժուորների մոտ (այլ կոտորեաւիքների մոտ):

Խ Ե Գ Ի Ի № 5.

Հետեւյալ տվյալների հիման վրա կազմել բալանսի աղյուսակ. կոտորեաւիքի անրոժանելի անտեսական ֆոնդը կազմում է 85.300 ուսուցիչ, փայաւժարներ 200.000 ուսուցիչ, շէնքեր 142.000 ուսուցիչ, զանազան տեսակի գույք 14.200 ուսուցիչ, ազատ միջոցներ Պետական բանկում 58.000 ուսուցիչ, ապրանքներ 100 000 ուսուցիչ, հաշվում է բանկը ծառայողներին չվճարւած աշխատավարձ (բալանսում անվանել ուղղակի «բանկի-ծառայողներ») 2500 ուսուցիչ, կոտակիման զանազան ֆոնդեր (բալանսում անվանել «զանազան ֆոնդեր») 35.3000 ուսուցիչ, պարտք այլ կոտորեաւիքների 7.100 ուսուցիչ, դրամարկղում 4000 ուսուցիչ և կոտորեաւիքների վրա պարտք կա 12.000 ուսուցիչ:

Խ Ե Գ Ի Ի № 6.

Հետեւյալ տվյալների հիման վրա կազմել հետևողական բալանսներ.

1. Պետձեռնարկը պետութունից ստացել է՝ 560.000 ուսուցիչ, շէնքեր և կառուցումներ, 15.000 ուսուցիչ զանազան տեսակի գույք և 459.000 ուսուցիչ ապրանքներ (բոլորը մշտական աղբյուրի կարգով):

2. Իրացւած է կանխիկ վճարով 14.000 ուսուցիչ ապրանք (իրացումը պայմանորեն համարում ենք ինքնարժեքով):

3. Դրամարկղից Պետբանկ է մուծւած 10.000 ուսուցիչ:

4. Պանութում առայժմ առանց վճարելու ձեռք է բերւած 2000 ուսուցիչ:

5. Բաց է թողնւած այլ պետական ձեռնարկի, առայժմ առանց վճար ստանալու (պայմանորեն ինքնարժեքով), 800 ժուրլու ապրանքներ:

6. Ստացւած է 5000 ուսուցիչ ապրանք, վորի վճարը ձեռնարկւած է Պետական բանկի միջոցով:

7. Գնած պահարանի համար դրամարկղից վճարւած է 400 ուսուցիչ:

8. Բաց թողած 800 ուսուցիչ ապրանքի վճարը (տես մինչ այս § 5)

9. Պետբանկը վճարել է գնած գույքի արժեքը 2000 ուսուցիչ (տես § 4):

10. Դրամարկղում յեղած դրամի մնացորդը մուծւած է Պետբանկ:

Խ Ե Գ Ի Ի № 7

Հետեւյալ տվյալների հիման վրա կազմել մի շարք հետևողական բալանսներ:

I. Սկզբնական բալանսը № 5 խնդրում ցույց տւածն է.

II. Գործառնություններ.

1) Աշխատավարձ վճարելու և այլ ծախքերի համար Պետբանկից կանխիկ դրամով ստացւած է 3000 ուսուցիչ:

2) Աշխատավարձի պարտքը մարելու համար դրամարկղից վճարւած է 2.200 ուսուցիչ:

3) Մուտք է յեղել դրամարկղ 3.800 ուսուցիչ փայաւժար:

4) Մուտք յեղած փայաւժարների գումարը հանձնւած է Պետբանկ:

5) Վճարումը Պետական բանկի միջոցով կատարելու կարգով գնւած է 15.000 ուսուցիչ ապրանք:

6) Դերժուորները Պետբանկի մեր ընթացիկ հաշիվն են մուծել, ի մարումն իրենց ունեցած պարտքի (տես սկզբնական բալանսը), 7500 ուսուցիչ:

7) Պետբանկի միջոցով մեր կրեդիտորներին վճարւած է մեր պարտքը (տես սկզբնական բալանսը) 5000 ուսուցիչ:

8) Ձեռք են բերւած 25.000 ուսուցիչ ակցիաներ և փայեր, վորոնց վճարումը կատարւած է Պետբանկի միջոցով:

9) Իրացւած է (պայմանորեն ինքնարժեքով) 1000 ուսուցիչ ապրանք և դրամն ստացւել է դրամարկղում:

10) Ամբողջ դրամական մնացորդը հանձնւած է Պետբանկին:

Փանթաւթյուն.— № 6 և 7 խնդիրների յուրաքանչյուր հաջորդական բալանսում + և — նշաններով ցույց տալ գործառնական փոփոխությունները:

Յ Ե Ր Ր Ո Ր Գ Ռ Ե Մ Ս.

Բալանսային իսթվառման րնդհանուր մերոցոլոգիան
(Շարունակութուն)

ԲԱԼԱՆՍԻ ՏԱՐԲԱԼՈՒԹՅՈՒՄԸ ՀԱՇԻՎՆԵՐԻ. ԱԿՏԻՎ ՅԵՎ ՊԱՍՍԻՎ
ՀԱՇԻՎՆԵՐ

Յերկրորդ թեմայից մենք գիտենք, Վոր հաշվառման բալանսային մեթոդի ելութունը հաշվառումը բալանսի շրջանակում իրագործելն է, Վոր տնտեսական յուրաքանչյուր գործառնություն բալանսում չերկակի արտացոլում ունի: Արտաքին կողմից ևս բալանսային հաշվառումն ելապես նշանակում է յուրաքանչյուր տնտեսական գործառնությունից հետո անընդհատ բալանսներ կազմել: Այս է բալանսային մեթոդի ձևական կողմի ելութունը: Բայց հաշվառումն անընդհատ բալանսներ կազմելու միջոցով իրականացնելը կլինի չկատարելագործված և անբավարար: Այդպիսի հաշվառման դեպքում մենք տնտեսության գրության և նրա կառուցվածքի մասին անընդհատ տվյալներ ստանալով հանդերձ, ընդհանրացրած տվյալներ չենք ունենա տնտեսական պրոցեսների և նամանավանդ տնտեսական գործունեյության պլանի կատարման ընթացքի վերաբերյալ:

Այստեղից առաջանում է անհրաժեշտություն բալանսի հաշվառման այնպիսի կենսագործման, Վորը, չխզելով իր կապերն ամբողջության հետ, այսինքն բալանսի հետ և արտացոլելով նրա մեջ տնտեսության փոփոխվող կազմը, միևնույն ժամանակ հնարավորություն տալ արտացոլելու տնտեսական բոլոր պրոցեսները և առաջերևու նրանց կատարման ընթացքը պլանային հանձնարարությունների հետ:

Այս նպատակին է ծառայում հաշվառման կարգով բալանսն իր բաղադրիչ մասերին տարրալուծելը՝ թե՛ ըստ ակտիվի և թե՛ ըստ պաս-

իւնչպես և յերկրորդ թեմայում՝ մենք բալանսի հասկացողությունն առաջիմ սահմանափակել ենք միայն տնտեսական մասսայի կառուցվածքի արտացոլումով, այդպես էլ այստեղ առաջիմ բալանսի հաշվառման մասերի հասկացողությունը կսահմանափակենք Վորպես տնտեսական մասսան Վորոշոյնների, այսինքն՝ առաջիմ կկոսենք այդ մաս-

սայի շարժման հաշվառման Վոր թե տնտեսական պրոցեսները շարժման և նրանց պլանների հետ համեմատելու մասին:

Բալանսի այն մասերը, Վորոնք մեջ հաշվառման համար դնում ենք առանձին տնտեսական մասսաները, կոչվում են հաշվներ: Այսպիսով հաշիվը բալանսի տվյալ մասում տեղի ունեցող փոփոխությունների հաշվային գրանցումների համար է, նա բալանսի մասն է:

Վերցնենք յերկրորդ թեմայում բերված № 1 բալանսը: Այստեղ ակտիվում մենք միջոցների դասավորման հինգ ձև ենք տեսնում՝ ա) շենքեր և կառուցումներ, բ) գույք, գ) դրամարկղ, դ) Պետքանկ ըստ հաշվարկների և ե) ապրանքներ: Իսկ պասսիվում՝ միջոցների մեկ աղբյուր՝ կանոնադրական ֆոնդ: Այստեղից այս բալանսի ակտիվը 5 հաշիվների պետք է տարրալուծել, Վորոնք ակտիվ հաշիվների խումբ կկազմեն, իսկ պասսիվը 1 հաշիվ կունենա, Վորը պասսիվ հաշիվների խմբին կվերաբերի:

Այսպիսով բոլոր հաշիվների հիմնական բաժանումը բալանսի վերաբերմամբ յերկու տեսակ է՝ ակտիվ հաշիվներ, Վորոնք բալանսի ակտիվի փոփոխություններն են հաշվի առնում, և պասսիվ հաշիվներ, Վորոնք բալանսի պասսիվի փոփոխություններն են հաշվի առնում:

Բալանսի յուրաքանչյուր ակտիվի, ինչպես և պասսիվի մասերում կարող են փոփոխություններ լինել դեպի 1) աճման կողմը և 2) նվազման կողմը: Դրա համար էլ թե՛ մեկ և թե՛ մյուս փոփոխությունը իրարից առանձին արտացոլելու համար հաշիվներին չերկկողմանի ձև է տրվում, Վորտեղ մի կողմում աճման փոփոխություններն են արտահայտվում, իսկ մյուսում՝ նվազման փոփոխությունները: Հաշվի չերկու կողմերն էլ դուրս տեսնիլիական, պայմանական անվանում ունեն՝ հաշվի ձախ կողմը «դեբետ» է կոչվում, իսկ աջը՝ «կրեդիտ» (բալանսային հաշվառման մեթոդոլոգիայում այս պայմանական տեսնիլական տերմինների ունեցած նշանակության մասին կկոսենք առանձին): Այստեղից հաշվի դեբետում գրելու փոխարեն ապում են՝ «հաշիվը դեբիտագրել», իսկ հաշվի կրեդիտում գրելու փոխարեն ապում են՝ «հաշիվը կրեդիտագրել», կամ այլ կերպ ապած՝ գրանցել դեբիտային փոփոխությունը և գրանցել կրեդիտային փոփոխությունը:

Հաշվի յերկկողմանի ձևն այսպես է՝

Հաշիվ (բալանսի այն մասի անունը, Վորի հաշվառման համար նախատեսված է այս հաշիվը):

Դեբետ

Կրեդիտ

Հաշվի յերկկողմանի ձևը պարտադիր չէ: Այստեղ բանը յերկու կողմի մեջ չէ, այլ յերկակի փոփոխության, դեբիտագրման և կրեդիտագրման մեջ է: Կարելի չէ հաշվին տալ նաև միակողմանի ձև, միայն

դեբետի և կրեդիտի համար բաժան սյունյակներով: Այն ժամանակ հաշվի ձևն այսպես կլինի:

Հ Ա Շ Ի Վ (անունը)

Գործառնությունների գրանցումն	Դ ե բ ե տ	Կ Ր Լ Գ Ի տ

Այժմ անցնում ենք ակտիվ և պասսիվ հաշիվների գրանցումների ձևերին: Հաշվի մեջ կարևորն այն է, վոր աճման և նվազման փոփոխություններն առանձին-առանձին արտահայտվեն, բայց ամենևին նշանակություն չունի այն հանգամանքը, թե վոր կողմում մենք կարտահայտենք այս կամ այն փոփոխությունը:

Դրա համար ել, չեթե մենք հաշվառման լինթակա ունեցվածքի գրանցումը դեբետում կատարենք, ապա բնական է, վոր աճումը պետք է նույնպես դեբետում գրանցենք, իսկ նվազումը՝ կրեդիտում: Ընդհակառակը, չեթե հաշվառման լինթակա ունեցվածքը վորոշող առաջին գրանցումը կրեդիտում կատարենք, ապա կրեդիտում ել մենք պետք է գրանցենք նաև աճումը, իսկ դեպքում՝ նվազումը:

Այստեղից հաշիվները գրանցումների կառուցվածքի սխեման կարող է չերկու տեսակ լինել:

Առաջին ձևը

Հ Ա Շ Ի Վ (անունը)

Դեբետ	Կրեդիտ
Սկզբնական գրանցում Աճում (+)	Նվազում (—)

Յերկրորդ ձևը

Հ Ա Շ Ի Վ (անունը)

Դեբետ	Կրեդիտ
Նվազում (—)	Սկզբնական գրանցում Աճում (+)

Մի կողմից ակտիվ հաշիվները պասսիվ հաշիվներից տարբերելու համար, մյուս կողմից դեբետային փոփոխությունները կրեդիտայիններին հակադրելու համար առաջին ձևը գործ էածվում ակտիվ հաշիվների համար, իսկ յերկրորդը՝ պասսիվ հաշիվների համար:

Սրանից հետո ըստ հաշիվների փոփոխությունների գրանցումներն անհամեմատ պարզ կլինեն:

Վերջենք որինակ՝ դրամարկղի ակտիվ հաշիվը և ակտեզ կատարենք հետևյալ գրանցումները՝

1) Սկզբնական մնացորդ կա 1000 ուրլի (գրանցումը կլինի դեբետում):

2) Նորից ստացված է 400 ուրլի (գրանցումը նույնպես դեբետում կլինի):

3) Ծախսված է դրամարկղից 540 ուրլի (այս դեպքում արդեն գրանցումը կրեդիտում կլինի):

Դրամարկղի հաշիվը հետևյալ տեսքը կընդունի.

ՀԱՇԻՎ ԴՐԱՄԱՐԿՂԻ

Կրեդիտ

Դեբետ

Սկզբնական մնացորդ 1.000	Դուրս ե արված դրամարկղից (—) 540
Մուտք է յեղիլ դրամարկղ (+) . . . 400	

Յեւ այսպիսով յեղած կանխիկ դրամական միջոցների չափով դրամարկղի հաշիվում կտարվի այդ միջոցների չափի փոփոխությունների առանձնացրած հաշիվը:

Միաժամանակ այդ միջոցների չափի փոփոխության հաշվառումն արտացոլում է և վորակական փոփոխություններն այն իմաստով, վոր նա պարզում է տնտեսության տրամադրության տակ յեղած կանխիկ գրամական միջոցների չափը:

Դրամարկղի գրությունը պարզելու համար (թե չուրաքանչյուր գործառնությունից հետո և թե մի շարք գործառնությունից հետո), բաժանված է դեբետի և կրեդիտի գումարները գումարել առանձին-առանձին և մեծ թվից հանել փոքր թիվը: Այդ դեպքում մենք կպարտադրվենք, ինչպես ասում են, հաշվի սալդոն (լատինական saldo բառից, զենք, ինչպես ասում են, հաշվի սալդոն (լատինական saldo բառից, վոր նշանակում է մնացորդ): Պարզ է, վոր դրամարկղի հաշվում ես, ինչպես և ամեն մի ակտիվ հաշվում, կարող են լինել հետևյալ յերկու դեպքերը:

1) Դեբետն ու կրեդիտը հավասար են իրար, այսինքն վոչ մի սալդո չի ստացվում:

2) Դեբետը կրեդիտից շատ է և մնացորդն ստացվում է դեբետից (վորպես մեծ թվից—) կրեդիտը (վորպես փոքր թիվը) հանելու միջոցով: Որինակ՝ վերը բերված դրամարկղային հաշվի որինակում կստացվի $(1000 + 400) - 540 = 860$ ուրլի դեբետային սալդո:

Յերրորդ դեպքն, այսինքն յերբ կրեդիտը դեբետից շատ լինի, ակնհայտ է, վոր ակտիվ հաշիվներում նման բան լինել չի կարող, քանի վոր անհնար է, վոր յեղած և ստացված միջոցների գումարից մեծ գումար հանվի:

Այստեղից ել ակտիվ հաշիվների կառուցվածքի սխեման այսպիսին կլինի:

ԱԿՏԻՎ ՀԱՇԻՎ (վրբ ցանկանաք)

Դեբետ

Կրեդիտ

Սկզբնական դրանցում (յերբ անցած ժամանակից մնացորդ կա)
Մուտքեր (+)
Այս կողմը կամ հավասար է կրեդիտին, կամ նրանից ավել:

Նվազում (—)

Այս կողմը կամ հավասար է կրեդիտին, կամ նրանից պակաս է:

Ակտիվ հաշիվներում սալդոն յեվա միայն դեպեժային կաբող է լինել, ըստ վորում նա վորոշ միջոցների (նալած հաշվի անվան) մնացորդն է ցույց տալիս:

Այժմ վերցնենք վորեւ պասսիվ հաշիվ, որինալ՝ կանոնադրական ֆոնդի հաշիվը և այնտեղ հետեյալ գրանցումները կատարենք:

